ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆԴԵՍ

2/2004



Նոր Զուլա 400

ՀԱՅ ԱՐՎԵՍՏ
2004/2(8)
ARMENIAN ART · CULTURAL MAGAZINE
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆԴԵՍ

Հիմնադիր եւ հրատարակիչ
«Մոմիկ» հայ մշակույթի կենտրոն,
«Յոթ արվեստ» ՍՊԸ

Հրատարակվում է գիտական համագործակցությամբ
Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանի
ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի
Հայաստանի ազգային պատկերասրահի

Գլխավոր խմբագիր
Կարեն ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Գործադիր տնօրեն
Հասմիկ ԳԻՆՈՅԱՆ
Պատասխանատու քարտուղար
Նորայր Վարդանյան
Համակարգչային ձեւավորող
Վարդան Դալլաքյան
Աշխատակազմ
Լիլի ԳԱՍՊԱՐՅԱՆ, Անժել ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
Խմբագրական խորհուրդ
Վարազդատ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Շահեն ԽԱՉԱՏՐՅԱՆ,
Մուրադ ՀԱՍՐԱԹՅԱՆ, Մարտին ՄԻՔԱՅԵԼՅԱՆ,
Վարդան ՎԱՐԴԱՆՅԱՆ, Դանիել ԵՐԱԺԻՇՏ

Համարը տպագրվում է ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 400 - ԱՄՅԱԿԻ ՆՇՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

Հանդեսն ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի
«Ատենախոսությունների արդյունքների տպագրության
համար ընդունելի ամսագրերի ցուցակում»

Գրանցման վկայական՝ 01Մ000095
Դասիչ՝ 77789
Ստորագրված է տպագրության 27.07.2004

Խմբագրության հասցեն
Երեւան, Հանրապետության 32
Հեռախոս՝ (374 1) 52 3501, բջջ.՝ (374 9) 40 3215
Ֆաքս՝ (374 1) 563661
E-mail: hayart02@hotmail.com

Նյութերը տպագրվում են արեւելահայերենով եւ արեւմտահայերենով, ընագրի ուղղագրությամբ:
Հոդվածներում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետին:
Գովազդի բովանդակության պատասխանատուն գովազդատուն է:
Արտատպություն կատարելիս հղումը «Հայ արվեստին» պարտադիր է:



Ամսագրում օգտագործված հատակագծերը
եւ լուսանկարների մի մասը վերցվել են հետեւյալ հրատարակությունից՝
A. Hakhnazarian, Nor Djulfa
(Documents of Armenian Architecture, 21), Venezia, 1991.

Հայրապետական գնահատանք

Այր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով ողջունում ենք Ձեզ՝ իրանաբնակ սիրեցեալ Մեր զաւակներիդ, որ հաւատով ու հայրենապաշտ ոգով պատրաստուում էք տօնախմբել Նոր Ջուղայի Հայոց Թեմի 400-ամեայ յոբելեանը, ինչպէս որ ուրախութեամբ տեղեկացանք Հոգեշնորհ Տ. Շահան Ծ. Վարդապետ Սարգիսեանից:

Ամենայն Հայոց Հայրապետիս համար գեղեցիկ առիթ է խօսք ուղղելու Իրանում հարիւրամեակների յիշատակներով, նախնեաց հաւատով ու սրբութիւններով ապրող մեր Սուրբ Եկեղեցու զաւակներին: Գոհութեան աղօթք ու փառք ենք բարձրացնում առ Աստուած, որ դարերի փորձութիւնների մէջ Հայրենիքում եւ նրանից դուրս խնամեց իր հօտը փոքրիկ ու պահպանեց քրիստոնէութեան լոյսով հոգեզուարթ:

400-ամեայ արժանայիշատակ այս մեծ տարեդարձի առիթով Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Սպահանի Հայոց Թեմի հոգեւոր ուխտապահ դասին, թեմական-եկեղեցական կառոյցների պատուարժան անդամներին, հայրենակցական ու մշակութային միութիւնների բարեջան անդամներին, ողջ իրանահայութեանը եւ հաւատաւոր համայն մեր ժողովրդին ի սփիւռս աշխարհի:

Ամենայն Հայոց կաթողիկոս ԳԱՐԵԳԻՆ Բ-ի
օրհնության գրից
13 օգոստոս, 2003 թ.

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն, Հայրապետական օրհնութեամբ եւ քրիստոնէական ջերմ սիրով կ՚ողջունենք Նոր Ջուղայի մէջ հայերու հաստատման 400 - ամեակին առիթով, Ձեզ, Ազգ, Իշխանութիւնը, Թեմէն ներս գործող բոլոր միութիւնները, կազմակերպութիւններն ու մարմինները եւ մեր ժողովրդի հարազատ զաւակները: Մեզի համար հոգեկան անհուն ուրախութիւն է ողջունել ձեր Թեմի չորս հարիւր տարիներու հարուստ կեանքը, որ լեցուեցաւ ու ծաղկեցաւ մեր ազգին ու եկեղեցւոյ հոգեմտաւոր դարաւոր արժէքներով, աւանդութիւններով ու սրբութիւններով:

Հին Ջուղան Նոր Ջուղայի ճամբով ապրեցաւ ու կենսագործուեցաւ ձեր Թեմի ժողովուրդի կեանքին մէջ: Ու Նոր Ջուղան ունենալով իր կեանքին ու գործին սիրտը, ձեր պատմական Թեմը դարձաւ Սփիւռքի ամենէն կենսաբորբ գաղութներէն մէկը՝ հոգեւոր, մշակութային, կրթական ու ազգային իմաստով:

Կ՚աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ ձեր Թեմի չորս հարիւր տարուան արմատները պահէ միշտ ամուր, որպէսզի նոր ընձիւղներով ճիւղաւորուի ու առաւել եւս պտղաբերպուի Սպահանի Հայոց Թեմը՝ ի փառս Հայ Եկեղեցւոյ ու ժողովրդին:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս ԱՐԱՄ Ա-ի
կոնդակից
17 սեպտեմբեր, 2003 թ.

ՋՈՒՂԱՅԻ ՀԱՊԹԱՆԱԿԸ

Ադրամի ափին գտնվող Ջուղա բնակավայրը (Հին Ջուղա) հայ մատենագրության մեջ առաջին անգամ հիշատակել է Մովսես Խորենացին 5-րդ դարում, ապա Ղեւոնդ պատմիչը՝ 7-րդ դարում: Բայց դա չի խանգարել, որ 16-17-րդ դարերում շրջանառություն գտնի մի ավանդություն, ըստ որի ջուղայեցիները գաղթել են Անիից, եւ բնակավայրի անունն էլ իբր առաջացել է «Անիի ծյուղն ա» (Ճուղա-Ջուղա) արտահայտությունից: Իհարկե, տեղանվան այսօրինակ ծագումն իրականությանը չի համապատասխանում, սակայն որոշակի հիշատակություններ կան, որ Անիի անկումից հետո, իրոք, որոշ թվով անեցիներ հաստատվել են Ջուղայում: Բայց Անի-Ջուղա կապը ավելի է առարկայանում, երբ նկատի ենք առնում ջուղայեցիների գործնական հակակիշները, ձեռներեցությունը, կենսասիրությունը: Պատմական մի մոայլ ժամանակահատվածում (16-րդ դ.), երբ ողջ Հայաստանը թաղված էր խավարի մեջ, առեւտրական ճանապարհին գտնվող Ջուղան իր գործունյա ու համարձակ զավակների շնորհիվ ծաղկում էր, միջազգային առեւտրական կապեր ստեղծում: 17-րդ դարի սկզբին այս բարեկեցիկ ավանով անցնող Շահ Աբասը զարմացած ու հիացած էր մնացել իրեն դիմավորող եւ հյուրընկալող ջուղայեցիների հարստությունից: Մի քանի տարի անց՝ 1604-ին ջուղայեցիներն իրենց արտաքաղաքացիության դիմաց յուրահատուկ «փոխհատուցում» ստացան... Թուրքերի դեմ պատերազմող Շահ Աբասը որոշելով հետ բաշվել ու թշնամու ճանապարհին անապատ թողնել, Շիրակից մինչեւ Նախիջեւան ընկած տարածքի ողջ հայությանը բռնագաղթեցնելով Պարսկաստանի խորքերը, ջուղայեցիներին նույնպես տեղահանելով՝ տարածք հատկացրեց իր մայրաքաղաք Սպահանի արվարձանում: Այսպես ամայացավ Ջուղան եւ հիմնադրվեց Նոր Ջուղան: Այդ խռովահույզ ժամանակից անցել է ուղիղ 400 տարի:

Ինչ եղավ հետո:

Նոր Ջուղան դարձավ հայ իրականության բացառիկ երեւույթներից մեկը, Հայաստանից հեռու, մահմեդական ափխարհակալ երկրի սրտում գտնվող, բայց բուն հայկականությունն անշեղ պահպանած առեւտրական, հոգեւոր ու մշակութային կարեւորագույն կենտրոն, որի պատմությունը հատորներ է կազմում: Հարկ է ընդգծել, որ ջուղայեցիների գործունեությունը ոչ թե տեղային, այլ համահայկական նշանակություն է ունեցել: Օրինակ, 17-18-րդ դարերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատմության մեջ, գահակալի ընտրությունից սկսած մինչեւ կաթողիկոսության ֆիզիկական ու նյութական ապահովությունը, մեծագույն դեր էր վերապահվում ջուղայեցիներին: Հենց նրանք էին, որ հայաստանաբնակներից ավելի շուտ հասան Եվրոպա ու Ռուսաստան, Հնդկաստան ու Ցինաստան, կամրջեցին Արեւելքն ու Արեւմուտքը եւ իրենց հմուտ ափխարանով օտարների շրջանում անխոչընդոտ գործարարի բարձր վարկանիշ ձեռք բերեցին:

Իրենց փոքրիկ քաղաքը նրանք զարդարեցին տասնյակ գեղաշեն եկեղեցիներով, մեծ տեղ հատկացրին ու մշակույթին: 1638-ին նրանց հիմնած տպարանն առաջինն էր ամբողջ Միջին Արեւելքում:

Այնուամենայնիվ Նոր Ջուղան դժվարին պատմություն է ունեցել, ապրել վերելքի ու անկման ժամանակաշրջաններ, բազում զրկանքներ կրել, բայց հարատեւել է:

Տողերիս հեղինակին բախտ վիճակվեց Նոր Ջուղայում լինել 2003-ի դեկտեմբերին եւ 7 օր հյուրընկալվել Ս. Ամենափրկիչ վանքում: Երբ ինձ հարցնում են, թե ինչպիսին էր քաղաքը, ասում եմ. «Պատկերացրեք էջմիածին քաղաքի կեսի չափ մի տարածք, որտեղ Ս. Հռիփսիմե եկեղեցու չափի կամ ավելի մեծ 12 եկեղեցի կա»: Այդպիսին է այսօր Նոր Ջուղան, որը նախկինում ավելի ընդարձակ է եղել ու ավելի մեծաթիվ եկեղեցիներ ունեցել:

Անկասկած շատ տպավորիչ էին Նոր Ջուղայի եկեղեցիները, որոնք չի կարելի սոսկ պատմական հիշատակներ համարել, քանզի բոլորն էլ գործող են, խնամված եւ տարվա մեջ իրենց տոնի օրերն ունեցող: Անմոռանալի էր Ամենափրկիչ վանքն իր ուշագրավ որմնանկարներով, թանգարանով, գրադարանով, թեմական գործուն կառույցներով ու առաջնորդարանով:

Ամենակարեւորն այն է, որ Նոր Ջուղան (ջուղայեցիներն իրենց քաղաքը պարզապես Ջուղա են կոչում) միայն պատմություն չէ, այլեւ ներկա եւ անկասկած ապագա ունի, որի առհավաստյան նրա ութ դպրոցներն են:

Ինձ համար ամենատպավորիչ օրերից մեկն այն էր, երբ Նոր Ջուղայի «Արարատ» մարզամշակութային միության բակում հավաքված, ուրախ վազվզող, զուցող, կապակող հարյուրավոր դպրոցահասակ հայ երեխաներ տեսա ու ինձ մի պահ թվաց, թե երեւանյան որեւէ դպրոցի բակում եմ... Իրենց համար սովորական օր էր, սովորական պահ, ինձ համար հուզիչ տեսարան, խորհրդանշական իրողություն: Ակամա մտածեցի, որ հենց ա՛յս է Ջուղայի հաղթանակը, այս մանուկների հայալեզու խոսքը, խինդ ու ծիծաղը: Եւ Նոր Ջուղայի հիմնադրման 400-ամյակի նշումը կարեւոր է հենց նրանով, որ հայ տեսակի կենսունակության մասին է վկայում, որն ի վիճակի է եղել բռնագաղթի դաժան ողբերգության մրուր տարալուծել եւ դրա փոխարեն ստեղծել մշակութային արժեք, վանք ու եկեղեցի, գիրք ու խաչքար: Չորս դար առաջ Էջմիածնի վանքից տարված մի քանի քարեր Նոր Ջուղայում դարձել են շնչավոր, դարձել հավաս ու ոգի պահպանող անխոցելի զրահ: Այդպե՛ս են ապրել ու խիզախել ջուղայեցիները եւ այդպես են ապրում այսօր: Փա՛ռք նրանց:

Կարեն Մաթեւոսյան

- Մեծարգո պարոն Օհանյան, արդեն մեկ տարի իրականացվում են Նոր Ջուղայում հայերի հաստատման 400-ամյակին նվիրված միջոցառումներ: Խնդրում եմ պատմեք, թե ի՞նչ է արված եւ ի՞նչ է նախատեսվում առաջիկայում:

- Մեր թեմի բարձրագույն՝ պատգամավորական ժողովը նկատի ունենալով, որ 2004-2006 թվերը համընկնում են մեծ գաղթի եւ մասնավորապես Նոր Ջուղայում հայերի հաստատման 400-ամյակին, որոշեց համապատասխան միջոցառումներով, արժանավայել կերպով նշել այն: Հոբելյան չենք ասում, քանի որ դա բռնագաղթի հետեւանք էր, բայց նշում ենք, որովհետեւ հակառակ 400 տարվա զրկանքներին, բազում նեղություններին, այդուհանդերձ Ջուղան եւ ընդհանուր առմամբ պարսկահայ գաղութը գոյատեւել են, պահելով նկարագիրը, ինքնությունը, կրոնը, միաժամանակ ներդրում ունեցել համայն հայության ազգային, հասարակական, մշակութային կյանքում:

Սպահանի թեմի պատգամավորական ժողովը հանձնարարեց ժողովի դիվանին (որի ատենապետությունը վարելու բախտն ունեմ) կյանքի կոչել համապատասխան կենտրոնական հանձնախումբ՝ միջոցառումները ծրագրավորելու համար, ինչպես նաեւ ստեղծել համապատասխան ենթահանձնախմբեր: Լծվեցին աշխատանքի, ստեղծվեց կենտրոնական հանձնախումբը, հրատարակություններ եւ ցուցահանդեսների ենթահանձնախմբերը: Կազմվել է միջոցառումների համալիր ծրագիր, որը հրապարակվել է մամուլում (այն ներկայացված է նաեւ մեր հանդեսում, խմբ.):

Մի շարք միջոցառումներ արդեն տեղի են ունեցել Ջուղայում, գիտաժողով է կայացել ԱՄՆ-ում, միջոցառումներ են նախատեսվում նաեւ Հայաստանում:

- Ինչպիսի՞ն է Նոր Ջուղան այսօր:

- Ջուղան հակառակ իր 400 տարվա պատմության, պատմության գիրկը անցած գաղութ չէ եւ այսօր ապրում է տարասփյուռ հայության գրկի մեջ իր գործող եկեղեցիներով, շուրջ 1000 աշակերտ ունեցող դպրոցներով, թեմական կառույցով, առաջնորդանիստ վանքով, մատենադարանով, տպարանով եւ ամենակարեւորը՝ համահայկական մտածողությամբ: Ջուղան, չնայած հայության թվի նվազմանը, վերջին տարիների դժվարությունների շրջանում Հայաստանին ու Արցախին առաջին ձեռք մեկնողներից է եղել:

Հարկ է նշել, որ մենք սացել ենք ոչ միայն մշակութային, այլեւ կալվածական ժառանգություն, որն օգտագործվում է ի շահ գաղութի: Օրինակ, շուրջ 500 ընտանիք բնակվում է մեր ազգապատկան (ժողովուրդն ասում է «վանքապատկան») տներում, օգտագործվում են ազգապատկան խանութներ, որոնք տնօրինում է կալվածական մարմինը եւ այլն:

Համայնքի կյանքում եկեղեցին ու թեմական կառույցը մեծ դեր ունեն: Մասնավորապես պետական այցանները ժառանգական եւ ամուսնական հարցերի կարգավորման ժամանակ առաջին հերթին հաշվի են առնում մեր կարծիքը: Որոշակի ազատություններ ունենք ուսումնական գործերում: Պետական ծրագրից դուրս իրավունք ունենք մեր դպրոցներում ու նախակրթարաններում դասավանդել հայոց լեզու, պատմություն, կրոն: 1961 թվից Սպահանի համալսարանի մեջ ունենք հայագիտական ամբիոն, որի առաջին շրջանավարտներից եմ: Ամբիոնն այժմ ավելի շատ պարսիկ ուսանողներ ունի, որը նույնպես կարեւոր է:



Թաքուլ Օհանյան.

Ջուղան հակառակ իր 400 տարվա պատմության, պատմության գիրկը անցած գաղութ չէ

«Հայ արվեստի» գլխավոր խմբագրի հարցազրույցը Սպահանի Հայոց թեմի պատգամավորական ժողովի ատենապետ եւ Նոր Ջուղայում հայերի հաստատման 400-ամյակի կենտրոնական հանձնախմբի նախագահ Թաքուլ Օհանյանի հետ (դեկտեմբեր, 2003 թ.):

Մեր համայնքը շատ ուշադիր է ազգային, հասարակական կյանքի նկատմամբ, շատ սերտ է համայնքի ու ազգային կառույցի կապը:

Ցավոք ունենք նաեւ դժվարություններ, որոնցից գլխավորը արտագաղթի մայնությունն է:

Համայնքը երկրպառակություններ չունի, այստեղ համերաշխություն է տիրում, որին մեծապես նպաստել է Հայաստանի անկախության վերականգնումը:

- Չե՞ք կարծում, որ 400-ամյակի նշումը ոչ միայն անցյալի վերարժեւորմանն է ուղղված, այլեւ նոր խթան է Նոր Ջուղայի վերազարթոնքի համար:

Մեր գլխավոր նպատակն էլ հենց այդ է: Այս ձեռնարկները առաջին հերթին դաստիարակչական նշանակություն ունեն, որի շնորհիվ նոր սերունդը ծանոթանալով իր պատմությանն ու մշակութային ժառանգությանը՝ առավել պարտավորված պիտի զգա եղածը պահպանելու ու զարգացնելու խնդրում: Մեր գաղութը կարող է նաեւ օրինակ ծառայել այլ գաղութների համար:

Հուսով եմ, որ այս եւ առաջիկա երկու տարիների միջոցառումները, ցուցահանդեսները, հրատարակությունները, գիտաժողովները լավագույնս կծառայեն իրենց նպատակին, եւ մենք պատմությունը ճիշտ արժեւորելով ու ներկան գնահատելով, ավելի վստահ կխայլենք դեպի ապագա:

Ի խորոց ուրտի

Ոլորտիր ընթերցողը մեր հանդեսի երկրորդ էջում նկատած կլինի սույն համարի տպագրության հովանավորի անունը: Սակայն պատշաճ է, որ մենք հիշյալ կարճ տողով չսահմանափակվենք, մանավանդ որ Նոր Ջուղայի 400-ամյակին «Հայ արվեստի» առանձին համար նվիրելու գաղափարն ունի իր մեկամյա նախապատմությունը: Այն ծագեց ԻԻՀ խորհրդարանի անդամ Ժորժիկ Աբրահամյանի մեր խմբագրություն կատարած այցի ժամանակ (օգոստոս, 2003): «Նոր Ջուղայի մասին չի կարելի գրել առանց Նոր Ջուղան տեսնելու», ասաց հարգարժան պատգամավորը եւ խոստացավ աջակցել, որպեսզի Սպահանի թեմական խորհուրդը հանդեսի խմբագրին հրավիրի Իրան: Խմբագրության դիմում նամակին ի պատասխան շուտով ստացվեց հրավերը, եւ 2003-ի դեկտեմբերին ինձ վիճակվեց 7 օրով իյուրընկալվել Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքում: Առաջնորդ Հայր Շահանին ես առաջին անգամ հանդիպել էի 1998-ին Լիբանանում, երբ նա Անթիլիասի Դպրեվանքի տեսուչն էր, եւ հայագիտական մեր ընդհանուր հետաքրքրությունները շատ կարճ ժամանակում բարեկամացրել էին մեզ: Իմ ճանաչած հոգատար ուսուցչապետը Նոր Ջուղայում գործունյա առաջնորդ էր, համայնքի խնդիրներով եւ հնամյա վանքի պատմամշակութային հոսքերի ժառանգության պահպանությամբ մտահոգ: Նոր Ջուղայում ժամանակս չափազանց հագեցած էր, բազում հրաշալի տպավորություններով եւ ուշագրավ հանդիպումներով լի, սակայն հանգամանալից հուշագրությունը պիտի թողնեմ մեկ այլ ժամանակի: Այստեղ միայն ուզում եմ երախտագիտությունս հայտնել Սպահանի թեմի առաջնորդ Տ. Շահան ծայրագույն վարդապետ Սարգսյանին, Պատգամավորական ժողովի աստիճանաբար եւ Նոր Ջուղայում հայերի հաստատման 400-ամյակի նշման կենտրոնական հանձնախմբի նախագահ Թաքուլ Օհանյանին, թեմական խորհրդի աստիճանաբար Հայր Շահնազարյանին, առաջնորդարանի ողջ անձնակազմին, ինչպես եւ իր բազմազբաղությունն անտեսելով ինձ Սպահանին ծանոթացնելու բեռը ստանձնած Ժորժիկ Աբրահամյանին:

Առանձնակի ակնածանքով պիտի հիշատակեմ վանական հյուրասենյակի իմ ընկերակից, փորձառու նկարիչ վերականգնող Սեդրակ Նազարյանին, որն այդ օրերին զբաղված էր Ամենափրկիչ վանքի որմնանկարների նորոգությամբ:

Նոր Ջուղայում կայացած հանդիպումներից հիշարժան է «Արարատ» մարզամշակութային համալիրում Փերիո կրթասիրաց միության 75-ամյակին նվիրված համերգ միջոցառումն ու ինքնատիպ ազգագրական ցուցահանդեսը, ուր տարազագետս փերիացիները ներկայացնում էին ավանդական կենցաղի տարբեր տեսարաններ:

Այցելության կարեւոր արդյունքներից եմ համարում «Հայ արվեստի» լիազոր-ներկայացուցչի հաստատումը Նոր Ջուղայում: Այդ գործն ստանձնեց ընտրելի երիտասարդ նկարիչ վերականգնող Անի Բաբայանը:

Կարեւոր ու հիշարժան հանդիպումներ կայացան նաեւ Թեհրանում. առաջնորդարանում՝ իմ վաղեմի ծանոթ առաջնորդի՝ գործունյա ու գրասեր Սեդրուի սրբազանի, «Ալիֆ» թերթի խմբագրությունում՝ եռանդուն եւ իր գործին անմնացորդ նվիրված խմբագիր Սեդա Գրիգորյանի, «Հանդես գրականության եւ արվեստի» ուշագրավ հրատարակության խմբագրակազմի մշակութանվեր ու ստեղծագործ անդամների, այնուհետեւ՝ Թեհրանի համալսարանականների միության անդամների, հայտնի ակնագործ եւ տոհմիկ վաստուրականցի Լեմիկ Ավետյան-Արծրունու հետ:

Նոր Ջուղա, «Արարատ» մարզամշակութային միության բակում. աջից՝ Կարեն Մաթեւոսյան, Տ. Շահան Ծ. Վրդ. Սարգսյան, Հայր Շահնազարյան

Թեհրան, «Ալիֆ» օրաթերթի խմբագրությունում. աջից՝ Կարեն Մաթեւոսյան, Սեդա Գրիգորյան, Երեւանի Փամբակյան

Իմ ամենամեծ հոգեբանական հանգիստը Թեհրանում՝ «Հայ արվեստի» լիազոր ներկայացուցիչ Ալբերտ Քոչարյանն էր, որին եւս խորին շնորհակալություն եմ հայտնում:

Հույս ունեմ, որ սույն համարի տպագրությունից հետո «Հայ արվեստն» ավելի մեծ թվով ընթերցողներ կունենա Իրանում եւ առավել արդյունավետ կծառայի իր բուն կոչմանը, որն է՝ աշխարհասփյուռ հայերին համախմբել մեր ազգային մշակույթի հայապահպան առանցքի շուրջը:

Կ. Մաթեւոսյան

Լուսանկարը՝ Ժորժիկ Գրիգորյանի

ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 400 - ԱՄԵԱԿԻ ՆՇՄԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻ ծրագիր-ժամանակացույց

Նոր Ջուղայում հայերի հաստատման 400-ամեակի նշման առիթով կենտրոնական յանձնախումբը մշակել է մի շարք ծրագրեր՝ տեղական, թեմի սահմաններում, ընդհանրական եւ արտասահմանում, որոնց ամփոփ պատկերները ներկայացնում ենք ստորեւ առ ի գիտութիւն, որպէսզի իրագործեն բոլոր ձեռնարկները:

Մեր նախաձեռնութիւնների կողքին այլ ծրագրեր եւս կան, որոնք ընդհանրապէս մեզ հետ խորհրդակցութեամբ են պատրաստում, ինչպէս՝ Իրանի եւ Հայաստանի միջեւ պետական ծրագիրը, ԱՄՆ-ում, պրոֆ. Ռիչարդ Յովհաննիսեանի գլխաւորութեամբ, UCLA համալսարանում յատուկ գիտական նստաշրջանը եւ այլ շրջաններում զանազան նախաձրագրեր:

1. 400 - ամեակի նշման հանդիսութիւնների պաշտօնական բացումը՝ Ս. Ամենափրկիչ վանքի մայր եկեղեցում, Ս. Յովսեփ Արեմաթացու տօնին, որը վաղուց հռչակած է իբրեւ վանքի տօն: Այս առիթով Ս. Պատարագ է մատուցելու՝ թեմական առաջնորդի ձեռամբ եւ Վեհափառ Հայրապետների կոնդակի ու օրհնութեան գրերի ընթերցումն է կատարուել (19 հոկտեմբերի 2003):
2. «Նոր Ջուղայի եկեղեցական զգեստներն ու սպասները», ցուցահանդէս, փետրուար 2004, Նոր Ջուղա
3. Նոր Ջուղայի 400 - ամեակին նուիրուած գարնանային խաղեր, մարտ 2004
4. «Նոր Ջուղան՝ լուսանկարներով», ցուցահանդէս, յուլիս 2004, Նոր Ջուղա
5. «Նոր Ջուղան՝ 400 - տարիներում», համագումար, հոկտեմբեր 2004, Նոր Ջուղա
6. Հայ - իրանեան յարաբերութիւններ՝ 400 - ամեայ Նոր Ջուղան, գիտաժողով, դեկտեմբեր 2004, Թեհրան
7. Նոր Ջուղայի հոգեւոր-մշակութային գանձերը, ցուցահանդէս, 2004, 2005 եւ 2006, Իրան, Եւրոպա, ԱՄՆ, Հայաստան, Հալէպ
8. «17-18-րդ դարերի եւրոպացի հեղինակները՝ Նոր Ջուղայի մասին», գիրք, դեկտեմբեր 2004
9. «Նոր Ջուղայի մշակութային ժառանգութիւնը», համագումար, մարտ 2005, Նոր Ջուղա
10. «Ս. Ամենափրկիչ վանքի տպարանի հրատարակութիւնները», ցուցահանդէս, մարտ 2005, Նոր Ջուղա
11. Երիտասարդական - ուսանողական ձեռնարկ, մայիս 2005, Նոր Ջուղա
12. Նոր Ջուղայի կենցաղային մշակոյթը, ցուցահանդէս, հոկտեմբեր 2005, Նոր Ջուղա եւ Թեհրան
13. Երաժշտական հանդէսներ՝ երգահանդէս եւ նւագահանդէս, հոկտեմբեր եւ դեկտեմբեր 2005, Նոր Ջուղա
14. Իրանահայ նկարիչների ցուցահանդէս, փետրուար 2006, Նոր Ջուղա, Թեհրան եւ շրջաններ
15. Ձեռարուեստ, ցուցահանդէս, մայիս 2006, Նոր Ջուղա, Թեհրան եւ շրջաններ
16. «Նոր Ջուղա հայագիտական հանդէս», յօդուածներ եւ տարբեր դէպքերի ժամանակագրութիւն, երեք թիւ, 2004, 2005 եւ 2006 (կենտ. յանձ.)
17. «Կոստանդ Ջուղայեցու աշխարհաժողով», գիրք, օգոստոս 2006
18. Հրատարակութիւններ
    ա. Արխիւային մատենաշարից, յունուար-փետրուար 2005
    բ. Թանգարանի գանձերի ալբոմ, մարտ-մայիս 2006
    գ. Եկեղեցական գանձերի ալբոմ, սեպտեմբեր-հոկտեմբեր, 2006
19. Ժողովրդական ձեռնարկներ, սեպտեմբեր 2006, Նոր Ջուղա
20. Տարազներ, ցուցահանդէս, հոկտեմբեր 2006, Նոր Ջուղա
21. Փակման պաշտօնական արարողութիւններ, Ս. Ամենափրկիչ վանքի մայր եկեղեցում, Ս. Յովսեփ Արեմաթացու տօնին: Ս. Պատարագ է մատուցելու թեմական առաջնորդի ձեռամբ 19 հոկտեմբեր 2006 եւ իրականացած ծրագրերի արժեւորման հանդիսութիւն, 20 հոկտեմբեր 2006

ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ ՀԱՅԵՐԻ
ՀԱՍՏԱՏՄԱՆ 400 - ԱՄԵԱԿԻ ՆՇՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

Թաթուլ ՕՀԱՆԵԱՆ

Ըստ պատմաբանների հայ ժողովրդի բռնագաղթը դէպի Պարսկաստան տեղի է ունեցել երեք անգամ: Առաջինը կատարուել է օսմանեան լծից եւ հարստահարութիւններից փրկուելու նպատակով: Առաքել պատմիչը գրում է, թէ Հայաստանի զանազան շրջանների բնակիչները գաղթել են Պարսկաստան, որոնց Շահ Աբբաս առաջինը բնակեցրել է Սպահան քաղաքի մէջ:

Առաքել պատմաբանը չի յիշատակել առաջին գաղթի թւականը, գաղթականների թիւը, սակայն, ըստ Չամչեանի, այդ գաղթը պիտի պատահած լինի 1586 թւին Շահ Աբբասի գահակալութեան ժամանակ:

Այս տարագրումը պատմիչի կողմից անուանել է «Օտարականների վտարում»:

Երկրորդ բռնագաղթը տեղի է ունեցել 1603 թւականին, երբ Շահ Աբբասը գրաւելով Երեւանը եւ հրոյ ճարակ դարձնելով, զօրապետների միջոցով Գանձակի, Արծկէի, Արճէշի, Վանի, Մանազկերտի, Կարսի, Կաղզուանի, Բասենի, Կարինի եւ Խնուսի շրջաններից գերիների մի բազմութիւն է բերում, որոնց թիւը անցնում էր 20.000-ից, որոնց Շահ Աբբասի հրամանով ամբողջութեամբ գաղթեցնում են Պարսկաստան, բնակեցնելով զանազան քաղաքներում, ինչպէս Քաշան, Սպահան, Գիլան եւ այլուր: Այս տարագրումը պատմութեան մէջ կոչւում է «Արարատի վտարումը»:

Երրորդը Հին Ջուղայի բնակիչների գաղթաշարժն էր, որ տեղի ունեցաւ երկրորդ՝ մեծ տարագրութիւնից յետոյ: Շահ Աբբասը յանձնարարել էր Թահմազ Ղուլի Բէգին գաղթեցնել ջուղայեցիներին դէպ Պարսկաստան: Թահմազ Ղուլի Բէգը հասնելով Ջուղա կարդում է Շահի հրովարտակը եւ ստիպում ջուղայեցիներին դուրս գալ իրենց տեղից՝ գաղթելու համար: Ջուղայեցիները թողնելով իրենց տուն տեղը, ողբաձայն հեկեկանքով գալիս իջեւանում են Արաքսի ափին, որտեղ գտնւում էր Շահ Աբբասը իր բանակով: Շահ Աբբասը յարգելով ջուղայեցիներին, կարեկցութիւն է ցոյց տալիս հրամայելով իր զօրքին օգնել Արաքս գէտը անցնելու:

Տասնեակ հազարաւոր զոհերի գնով գաղթականների այդ հսկայ զանգւածը սրի եւ մահւան սպառնալիքով արագութեամբ անցնում է Արաքս գէտը եւ ուղեւորւում դէպի Պարսկաստան:

Բազմաթիւ փաստեր եւ ականատեսների վկայութիւններ կան հայ կանանց, դեռահաս աղջիկների, մանկահասակ երեխաների, ծերունիների եւ առհասարակ ամբողջ գաղթականութեան անլուր տառապանքների, սովի, ցրտի, յափշտակութեան, բռնաբարութեան եւ լլկման մասին:

Հայ ժողովրդի պատմութեան մէջ իր չափերով աննախընթաց այս ահաւոր տարագրութիւնը, որը անուանւել է «Մեծ սուրգուն» (Մեծ գաղթ), ծանր հետեւանքներ ունեցաւ մեր ժողովրդի պատմական ճակատագրի վրա:

Տեղահանւած հայութեան բեկորները միատեսակ բախտի չարժանացան: Ոմանք խեղդուեցին Արաքս գետն անցնելիս, մի մասը ոչնչացաւ գերեվարութեան դաժան ճանապարհին, մի մասը ոչնչացաւ Մազանդրանի եւ Գիլանի ճահճուտների կլիմայական աննպաստ պայմաններին չդիմանալով, մի մասը վաճառքի հանւեց ստրկավաճառութեան շուկաներում, մի մաս տղաներ ու աղջիկներ (շուրջ 10 հազար) անհետացան, որոնք իբրեւ գերիներ ծառայութեան էին մտել Պարսից մեծահարուստների մոտ, եւ մի մասն էլ բնակութիւն հաստատեց Պարսկաստանի կենտրոնական շրջաններում՝ Սպահանում եւ շրջակայ գաւառներում, որոնք էլ իրենց հերթին բազում զրկանքներ կրեցին:

Համեմատաբար աւելի բարենպաստ պայմաններում են եղել Սպահան փոխադրուած ջուղայեցի մեծահարուստ խոջաները:

Գաղթականութեան որոշ մասը մնացել է Թաւրիզում եւ նրա հարեւան շրջաններում, մի մասը ցրւել է Պարսկաստանի զանազան շրջաններ՝ Քաշան, Ղազւին, Գիլան եւ այլն, իսկ մի մասը տեղաւորւել է քաղաքամայր Սպահանում եւ նրա մօտիկ շրջաններում: Քաղաքաբնակ կամ աւանաբնակները տեղաւորւել են մայրաքաղաքում, իսկ գիւղերից քշված գաղթականները բնակւել են գաւառներում, ինչպէս Լնջան, Ալիջան, Գեանդիման, Ջուախօ, Զհարմահալ, Փերիա, Բուրւարի եւ այլն: Գաղթականութիւնից 500 տուն էլ բնակեցւում է Շիրազում:

Ջուղայեցիների Սպահան հասնելուց յետոյ Շահ Աբբասի հրամանով Սպահանի միջով արեւելքից արեւմուտք հոսող Զայենդառուդ գէտի աջափնեակի հողամասը տրամադրւում է հայերին՝ իրենց տները կառուցելու: Յիշեալ հողամասի մէկ մասը նւէր էր տրւել Շահ Աբբասի կողմից, եւ մէկ մասն էլ հայերը գնել են:

Ջուղայեցիները անչափ գեղեցիկ ճարտարապետութեամբ եւ հատակագծով են կառուցել Նոր Ջուղան: Առաքել Դաւրիժեցին գրում է.

«Շինեցին յարկս եւ բնակութիւնս ինքնեանց հրաշալի յօրինւածքով, կամարակապ փողոցօք թեւաւոր ապարանօք եւ ամրասիւն հովանոցօք բարձրաբերձ եւ արքայակերպ շինւածօք, զարդարեալ եւ յօրինեալ ի ծաղիկս ոսկւոյ եւ Լաջվարդի եւ պէս-պէս երանգոց ակնախտիտ տեսողաց»:

Նախ տարածքի գրեթէ մէջտեղում կառուցում են համեմատաբար լայն փողոց՝ արեւելք-արեւմուտք ուղղութեամբ, որը եւ կոչում են ջուղայեցի առաջին իշխանապետ Խոջայ Նազարի անունով, ապա հիւսիսից (գէտի եզերքից) հարաւ բաժանում են տասը մասի եւ տասն ուղղաձիգ փողոցներ ձգում, որոնք հատելով Նազարի պողոտան անցնում են դէպի Սօֆէ կոչւած սարը: Այդ փողոցներից եօթն վերջանում են հայոց գերեզմանատանը, որը գտնւում է նոյն սարի լանջին: Այդ տասն փողոցները կոչւել են «տասնեակ» եւ ամէն մի տասնեակ անւանակոչւել է այդ փողոցի նշանաւոր բնակչի անունով, եւ թաղամասերն էլ կոչւել են ըստ տոհմական եւ հայրենակցական պատկանելութեան, ինչպէս օրինակ Դաւրէժցիների թաղամաս, Երեւանցիների, Դաշտենցիների, Քարտաշների եւ այլն:

Հարուստներն իրենց տները կառուցել են գէտի եզերքի եւ Նազարի պողոտայի միջեւ ընկած տարածքում՝ գէտից փչող զովասուն օդի պատճառով: Սոյն հարուստների թաղի բնակիչները չդիմանալով աֆղանների շրջանից սկիզբ առած անօրինութիւններին, կեղեքումներին եւ անտանելի աղէտներին, փախուստ են տալիս հեռաւոր սահմաններ, որի պատճառով ժամանակից շուտ ամայանում է այս թաղը:

Այսպիսի կանոնաւոր նախատեսութեամբ է հիմնադրւում նոր աւանը, որին կոչում են Նոր Ջուղա, որտեղ բնակութիւն են հաստատում Հայաստանից գաղթած ջուղայեցիները: Աստիճանաբար Նոր Ջուղայում կառուցւում են եկեղեցիներ, դպրոցներ, կարաւանատներ, բաղնիքներ, կամարակապ փողոցներ եւ այլն: Եւրոպացի ճանապարհորդներ Տաւերնեը, Տուրնեֆորը, Շարդենը, Դե լա Վալլան հիացմունքով են խօսում Նոր Ջուղայի մասին:

Բնակչութեան եկեղեցական եւ հասարակական կեանքը ղեկավարելու համար ստեղծում են թեմ, թեմական առաջնորդ, որի նստավայրն է լինում Նոր Ջուղան: Թեմի մէջ են մտել Նոր Ջուղայի, Շիրազի, Թէհրանի, Համադանի, Ռաշտի, Անզալիի, Քաշանի, Ղազւինի, Բասրայի, Բաղդադի, հետագային Հեռաւոր Արեւելքի հայ համայնքները:

Շահ Աբբասը ցանկանալով զարգացնել իր երկրի տնտեսական վիճակը, մեծ արտօնութիւններ է տալ հայ խոջաներին, որի բերումով Ջուղայում ստեղծւել էին հայ առեւտրական ընկերութիւններ, որոնց ձեռքում էր կենտրոնացած Պարսկաստանի մետաքսի առեւտուրը:

Առեւտրի մէջ մեծ հմտութիւն եւ ձեռներեցութիւն ունեցող շրջահայաց, օտար լեզու իմացող ջուղայեցի առեւտրականների առջեւ բացւում են բոլոր երկրների դռները:

Առեւտրականներից բացի մեծ թիւ են կազմել նաեւ արհեստաւորները: Ջուղայեցի հմուտ հայ արհեստաւորների նրբաճաշակ արտադրանքը բարձր գներով է սպառւել ներքին եւ արտաքին շուկաներում: Ոսկերչութեան, կերպասագործութեան, գորգագործութեան եւ մետաքսագործութեան հայ արհեստաւորները Պարսկաստանում համարւել են լաւագոյն վարպետները: Նոր Ջուղայի արհեստաւորների թիւը մի քանի հազար է եղել:

Նոր Ջուղան հանդիսացել է մշակոյթի ամենախոշոր օջախներից մէկը, որտեղ հաւաքւած են եղել մեծ թւով մտաւորականներ եւ արհեստաւորներ:

1636 թւին Խաչատուր վարդապետ Կեսարացու ջանքերով Նոր Ջուղայում հիմնւում է տպարան, որը Միջին Արեւելքում առաջինն էր: Խաչատուր Կեսարացին հիմնել է նաեւ բարձրագոյն մի դպրոց, (Մեմարան), որը տուել է հայ մատենագրութեան մի շարք աչքի ընկնող ներկայացուցիչներ: Յայտնի են Նոր Ջուղայի նկարչութեան, որմնանկարչութեան եւ մանրանկարչութեան հանճարեղ դէմքեր Մինաս Ծաղկողը, Յովհաննէս Մրքուզը, Յակոբ Ջուղայեցին, Բոգդան Սալթանովը եւ ուրիշներ, ինչպէս նաեւ տաղերգուներ, գուսաններ եւ բանաստեղծներ Բաղէր Օղլին, Ամիր Օղլին, Ղուլ Արգունին, Աշուղ Յովհաննէսը եւ այլն:

Թէեւ պատմական օրինաչափութեան հիման վրայ Նոր Ջուղան ունեցել է իր զարգացման, կայունութեան եւ անկման ելեւէջները, սակայն այն եզակի գաղթօջախներից է, որ հակառակ իր 400-ամեայ անցեալի՝ պատմութեան գիրկը չի անցել:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
• Յարութիւն Թ. Str Յովհաննեան, Պատմութիւն Նոր Ջուղայի, Ա հատոր, Նոր Ջուղա 1980:
• Հայ ժողովրդի պատմութիւն, Դ հատոր, Երեւան 1972:
• Ա. Ն. Աբրահամեան, Հայ գաղթավայրերի պատմութիւն, Ա հատոր, Երեւան 1964:



Ս. Ամենափրկիչ վանքը

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Արմեն Հախնազարյան

Հայկական բարձրավանդակն, իր աշխարհագրական դիրքի բերումով, ռազմաստեսական կարեւորություն է ունեցել եւ դարեր շարունակ կռվախնձոր եղել հարեւան պետությունների միջեւ, իսկ 6-րդ դարի վերջից՝ նաեւ թիրախ ոչխար ազգերի:

Բազմիցս, երկիրը տիրող բռնակալների ճնշումներին չդիմանալով, ժողովրդի մի մասը թողել է իր տունը եւ խաղաղություն փնտրել ուրիշ՝ հաճախ հեռավոր երկրներում: Եղել են նաեւ այնպիսի դեպքեր, երբ տիրակալները գաղթեցրել են հայությանը եւ որպես ճարտար ձեռք իրենց երկրները շենացնելու ճանապարհին օգտագործել:

Պատմական իրադարձությունները՝ թելադրված քաղաքական դրդապատճառներից, հաճախ ստեղծում էին այնպիսի իրավիճակ, որ ազգային ինքնությունը, ավանդներն ու մշակույթը չկորցնելու եւ ազգային տարրը պահպանելու նպատակով անհրաժեշտ էր զարգացնել գաղթօջախները, որոնք բախտի քմահաճույքով բաժին էին հասել հայ ժողովրդին:

Ունենալով ստեղծող ճարտար ձեռք, առեւտրական գործի հմտություն, հարուստ մշակութային ավանդ, դիվանագիտական իմաստություն, հեռավոր Արեւելքից մինչ Արեւմուտք հիմնվել ու բարգավաճել են բազմաթիվ հայ համայնքներ, գաղթօջախներ: Ստեղծված այս առանձնահատուկ վիճակում կարեւորագույն կողմերից է եղել հայ մշակույթի պահպանումը՝ այն համադրելով տեղի ավանդների եւ մտածողության հետ:

16-րդ դարում Հայաստանը նորից դառնում է երկու հարեւան պետությունների՝ Օսմանյան Թուրքիայի եւ Սեֆեյան Պարսկաստանի կռվադաշտը, որի հետեւանքով երկրի մեծ մասը ավերվում է եւ գրավվում Թուրքիայի կողմից:

17-րդ դարի սկզբին պարսից Շահ Աբաս թագավորը, կորցրածը վերադարձնելու նպատակով, հակահարձակման է անցնում, որով սկսվում է ավերիչ ընդհարումների երկարաեւ շրջան: 1603-ին Շահ Աբասը թուրք-պարսկական պատերազմից վերադարձի ճանապարհին Հայաստանի մի քանի գավառներ, ինչպես Գողթնը (Նախիջեւան) ավերում է, հիմնահատակ կործանում նշանավոր Զուղա քաղաքը եւ ժողովրդին քշում Պարսկաստան:

Բռնագաղթի ճանապարհին զրկանքներ ու մեծ կորուստներ կրելով՝ ժողովրդի միայն մի մասն է կարողանում հասնել Իրանի մայրաքաղաք Իսֆահան, որը բնակեցվում է մեծ մասամբ քաղաքաբնակ ջուղայեցիներով, իսկ գյուղացիներին տեղավորում են Իսֆահանի տարբեր գավառներում՝ մասնավորաբար Ջարմհալ (Ջարմհալե Բախթիայի) եւ Փերիայի շրջաններում: Քաջատեղյակ լինելով հայերի առեւտրական, արհեստագիտական, ճարտարագիտական եւ շինարարական ունակություններին, նպատակադրված էր բռնագաղթածների միջոցով Իսֆահանը դարձնել առեւտրի եւ մշակույթի խոշոր կենտրոն: Շահ Աբասը հայերին է տրամադրում Իսֆահանի Զայանդերուդ գետի աջակողմյան ընդարձակ տարածքները, ուր կարճ ժամանակամիջոցում նախագծվում եւ կառուցապատվում է մի առանձին քաղաք, որն ուներ կանոնավոր հատակագծով բաժանված առանձին թաղամասեր՝ ըստ գերդաստանների եւ տարբեր քաղաքներից գաղթած ժողովրդի: Նոր Զուղայում առաջանում են Մեծ Մեյդան, Փոքր Մեյդան, Երեւան, Դավրեժ եւ այլ անուններ կրող թաղամասեր:

Բռնագաղթած եւ Պարսկաստանում բնակեցված ժողովրդի մի մասը ջուղայեցի էր, որ բնակություն է հաստատում Նոր Զուղայում, իսկ Հայաստանի գյուղերից արմատախիլ եղած հողագործները հաստատվում են Փերիա եւ Ջարմհալի շրջանների շուրջ 55 բնակավայրերում (այժմ այստեղ միայն մեկ հայկական գյուղ կա, խմբ.):

1640 թվին Նոր Զուղան դառնում է մեծ համբավ վայելող մշակույթի կարեւոր կենտրոն: Այստեղ կառուցվում են հարուստ ճարտարապետություն ներկայացնող բնակելի եւ քաղաքացիական շենքեր՝ արհեստանոցներ, վաճառատներ, վարժարաններ, բաղնիքներ, տպարան, կառուցվում են գեղատեսիլ վանքեր, եկեղեցիներ եւ Նոր Զուղան Իսֆահանին միացնող, մինչ օրս գործող Զայանդերուդ գետի կամուրջները: Չորս կամուրջներից այսօր դեռ կանգնած երկու նշանավորներն են Խոջա Նազարի կառուցած կամուրջը (պարսկերեն Փոլե Խաջու) եւ Ալլահվերդի խանի կառուցած 33 թռիչք ունեցող կամարակապ կամուրջը (պարսկերենով Սիոսէփոլ), որը Քրիստոսի 33 տարիներն է խորհրդանշում:

Նոր Զուղայի 24 եկեղեցիներից այսօր կանգուն են 13-ը, որոնք ցայտուն վկաներն են ժամանակաշրջանի ճարտարապետության եւ մշակույթի:

Նոր Զուղայի առաջին եկեղեցին համարվում է Սբ. Հակոբ Մծբնա եկեղեցին, կառուցված 1606 թ., որն իր փոքր չափերի պատճառով երբեմն անվանվել է մատուռ:

Նոր Զուղայի բոլոր եկեղեցիները նախկինում ունեցել են տախտակե կոչնակ, որի նմուշը դեռ պահվում է Սբ. Կատարինե վանքում: Առաջին անգամ Սբ. Թովմաս եկեղեցու համար է զանգ բերվել, որի պատճառով էլ կոչվել է «Զանգով ժամ»: Եկեղեցին այժմ ավերված է:

Բացի Հայ Առաքելական 13 եկեղեցիներից, Նոր Զուղայում գործում էին մի կաթոլիկ եւ մի ավետարանչական եկեղեցի, որոնք այժմ թափուր են:

Ճարտարապետության տեսակետից Նոր Զուղայի եկեղեցիների հատակագծերը կրկնողություն են Գողթն-Երնջակ (ներկայումս՝ Նախիջեւան) գավառների եկեղեցիների, ունեն գմբեթավոր դահլիճ, քառամույթ բազիլիկ հորինվածքներ, որոնք բնորոշ են այս շրջանի եկեղեցիներին:

Որպես առանձնահատկություն պիտի նշել, որ Նոր Զուղայի բոլոր եկեղեցիները ունեն վանքանման համալիրներ (որոնց մեջ են մտնում խուցեր, պահեստներ, խոհանոց, սրահ, երբեմն դպրոց)՝ շրջապատված պարիսպանման բարձր պատով: Այս հոգեւոր կենտրոնները մի քանի մուտքերով միացած էին տարբեր փողոցների, ուր վտանգի ժամանակ քաղի բնակչությունը որպես ամրոց ապաստան էր գտնում:

Ընդհանուր առումով, Նոր Զուղայի կառուցողական արվեստը ինքնին համադրումն է հայերի՝ իրենց հետ բերած ճարտարապետական ձեւերի, ճաշակի, գեղեցիկի հասկացության, ազգային սովորությունների, կենցաղի եւ դրան ավելացած տեղական տվյալներ՝ ինչպես կլիման, շինանյութը, իսլամ կրոնի ստեղծած չափանիշներն ու սահմանները, հատկապես Սաֆայի մշակույթի եւ ճարտարապետության հեղինակությունը: Այս բոլորի վրա ավելանում է այն ազդեցությունը, որը ձեռք է բերվում վաճառական կարավանների միջոցով, ինչպես Վենետիկի եւ Ամստերդամի հետ, որտեղից նկարիչներ են բերվել Պարսկաստան՝ զարդարելու եկեղեցիներն ու բնակելի շենքերը, կամ Հնդկաստանից, նույնիսկ Չինաստանից՝ ուր վաճառականական տներ եւ հայ համայնքներ կային, բերվել են հախճապալներ, խորանի վարագույրներ, եկեղեցական կիրառական պիտույքներ:

Հայկական մշակույթը ծանոթ է իր ինքնատիպ եւ հարուստ դրսեւորումներով, սակայն հարկավոր է նկատի ունենալ, որ պատմական իրավիճակների բերումով այն հաճախ իր արտահայտությունն է գտել Հայաստանի սահմաններից դուրս՝ նպաստելով հայկական ճարտարապետության զարգացմանն ու նորակերտմանը:

Ուսումնասիրելով ներկայիս Հայաստանի, ինչպես Արցախի եւ Նախիջեւանի 17-19-րդ դարերի ճարտարապետության զարգացումը, պարզապես տեսնում ենք Նոր Զուղայի ազդեցությունը: Ուրիշ խոսքով՝ Հայաստանից արմատախիլ եղած ժողովուրդն իր նոր բնակավայրում՝ Իսֆահանի հարավում, Զայանդերուդ գետի եւ Սոֆի սարի միջեւ տարածվող Նոր Զուղայում ուրույն պայմանների շրջանակում կերտում է ճարտարապետության մի նոր մշակույթ եւ վաճառականների հովանավորությամբ ու արհեստավորների միջոցով այն կրկին վերադարձնում է Հայաստան: Նոր Զուղայում ստեղծված մշակույթը անխախտելի օղակն է հայկական դարավոր մշակույթի:



Ս. Ամենափրկիչ վանքի հատակագիծը

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Մուրադ Հասրաթյան

Սեֆյան Իրանի մայրաքաղաք Իսպահանի մոտ 1604/5 թթ. ստեղծված Նոր Ջուղայի գաղթօջախը եղել եւ այսօր էլ մնում է հայ մշակույթի կարեւոր կենտրոն: 17-րդ դ. 30-ական թթ. այստեղ թեմի առաջնորդ Խաչատուր Կեսարացին դպրոց է հիմնել (որը ժամանակակիցները «համալսարան» են կոչել), որտեղ դասավանդել են երաժշտություն, պոեզիա, բերականություն, փիլիսոփայություն, բնական գիտություններ եւ այլն: 1638 թ. նա հիմնել է տպարան, որը առաջինն էր Իրանում եւ ամբողջ Մերձավոր Արեւելքում: Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքում հիմնվել է մատենադարան, թանգարան, գրադարան: Ամենափրկիչ վանքի ձեռագրերի հավաքածուն աշխարհում հինգ նշանավոր կենտրոններից մեկն է Երեւանի, Վենետիկի, Վիեննայի, Երուսաղեմի մատենադարանների շարքում:

Հայ ավեստի պատմության մեջ կարեւոր տեղ է գրավում Նոր Ջուղայի ստեղծագործական դպրոցը, որը սկզբնավորվել է 17-րդ դ. եւ նպաստել հայ կերպարվեստի, որմնանկարչության զարգացմանը: Նոր Ջուղայի առաջնակարգ նկարիչներ Մինասը, Հովհաննես Մրքուզը եւ ուրիշները արեւմտաեվրոպական դասական նկարչության ավանդները ներդաշնակ զուգակցել են հայկական մանրանկարչության, պարսկական դեկորատիվ արվեստի սկզբունքների հետ: Նոր Ջուղայի ստեղծագործական դպրոցը նշանավորեց հայկական միջնադարյան արվեստից նոր ժամանակների արվեստին անցնելու գործընթացը: Կարեւոր են նաեւ Նոր Ջուղայի ճարտարապետության դերը եւ նշանակությունը հայկական ճարտարապետության զարգացման պատմության մեջ:

Նոր Ջուղան ունեցել է եւ այժմ էլ ունի կանոնավոր հատակագիծ, փողոցների ցանցը կազմված է եղել Խոջա Նազարի անունով կոչված պողոտայից, որը ձգվել է արեւմուտից-արեւելք (ունեցել է մոտ 2 կմ երկարություն եւ մոտ 10 մ լայնություն), եւ նրան ուղղահայաց հատող ու հյուսիսից հարավ ձգվող ինը փողոցներից, որոնք քաղաքը բաժանել են տասը թաղերի (հետագայում, քաղաքի ընդարձակման հետ թաղերն ավելացան):

Փողոցների հատումով առաջացած թաղամասերը ստացան իրենց անունները, որոնցից Մեծ եւ Փոքր Մեյդանները ու Ջարուն (շուկայական հրապարակը) հասարակական կենտրոններ էին:

Նոր Ջուղայի ճարտարապետական կերպարում գլխավոր դեր են խաղացել 17-րդ դ. կառուցված մոտ երկու տասնյակ եկեղեցիները, որոնցից այսօր պահպանվել են 13-ը, նրանց շարքում եւ նշանավոր Ս. Ամենափրկիչ վանքը:

Նոր Ջուղայի եկեղեցիները կառուցվել են մեծահարուստների՝ խոջաների մեկենասությամբ, որոշ դեպքերում նաեւ ժողովրդական հանգանակությամբ: Պահպանված 13 եկեղեցիների կեսից ավելին կանգուն են Մեծ եւ Փոքր Մեյդաններում, ինչպես նաեւ Ջարուն, Երեւանի, Թավրիզի (Դավրեժի), Քոչերի, Շարագյալի, Հակոբջանենց թաղամասերում:

Նոր Ջուղայի եկեղեցիներն ունեն մի շարք էական առանձնահատկություններ (տեղադրության, շինանյութի, ծավալային լուծման, երեսի ձեւավորման եւ այլն), որոնք առանձնացնում են նրանց հայկական եկեղեցական ճարտարապետության մեջ:

Նրանք ամբողջովին կառուցված են աղյուսով եւ կրում են 17-րդ դ. Իրանի շինարարական արվեստի զգալի ազդեցությունը, որն արտահայտվել է առանձին կոնստրուկցիաներում, շենքերի կերպարում եւ ձեւավորման մեջ:

Նոր Ջուղայի եկեղեցիները տեղադրված են թաղամասերի խիտ կառուցապատման մեջ, պարսպով շրջապատված բակում եւ հաճախ իրենց ճակատներից մեկով կից են պարսպի պատին: Բարձր պարիսպների շնորհիվ Նոր Ջուղայի եկեղեցիներն իրենց հիմնական



Սուրբ Մինաս եկեղեցին







Սուրբ Բեթղեհեմ եկեղեցին



ծավալով ողողակված են քաղաքի կառուցապատման մեջ, եւ միայն նրանց գմբեթներն են երեւում բնակավայրի համայնապատկերում: Եկեղեցիների մոտ, առանձին կանգնած, զանգակատներն ավելի ուշ են կառուցվել՝ հիմնականում 18-րդ դ.:

Պարիսպներին բակի կողմից կից են տարբեր բնույթի շինություններ՝ հավաքների համար դահլիճ, քահանայի բնակարան, տնտեսական սենյակներ, խոհանոց, փուռ, ինչպես նաեւ մատուռներ, որոնք դեմքերում՝ տապանատուն (օրինակ՝ Ս. Բեթղեհեմ եկեղեցու բակում): Որպես օրենք կա նաեւ ջրհոր: Այսպիսով Նոր Ջուղայի եկեղեցիներն իրենց շրջապատող շինություններով, բարձր պարսպով ունեն վանքերին բնորոշ ճարտարապետություն եւ ինչպես 17-րդ դ. Հայաստանի վանք-ամրոցները, դրանք եւս վտանգի դեմքում պատսպարում էին տվյալ թաղամասի բնակչությանը:

Նոր Ջուղայի եկեղեցիներն ըստ հորինվածքի բաժանվում են երեք հիմնական տիպաբանական խմբի:

Առաջինը քառամույթ գմբեթավոր դահլիճն է, երկրորդը՝ գմբեթավոր դահլիճն իր երկու ենթատիպերով (երկու զույգ եւ մեկ զույգ որմնամույթերով), երրորդը՝ «ամառային»-բաց աբսիդով եկեղեցիները:

Բոլոր եկեղեցիներն ունեն ներսից հնգանիստ աբսիդ, երկու կողքերին ուղղանկյուն սենյակներ-ավանդատներ: Ներսից հնգանիստ աբսիդներն երեւան եկան հայկական ճարտարապետությունում առաջին անգամ 17-րդ դ., ընդ որում, Նոր Ջուղայից բացի, նրա հետ սերտ կապեր ունեցող նաեւ Նախիջեւանի ճարտարապետական դպրոցում:

Նոր Ջուղայում քառամույթ գմբեթավոր բազիլիկ են Ս. Ստեփանոս (1614 թ.), Ս. Հովհաննես Մկրտիչ (1621 թ.), Ս. Սարգիս (17-րդ դ. երկրորդ կես) եւ Ս. Մինաս եկեղեցիները:

1659 թ. Դավրեժ քաղում կառուցված Ս. Մինաս եկեղեցին իր հորինվածքով եզակի է ոչ միայն Նոր Ջուղայում, այլեւ ընդհանրապես Հայաստանի եկեղեցական ճարտարապետությունում: Ունենալով քառամույթ գմբեթավոր բազիլիկի հատակագծային հորինվածքը, Ս. Մինաս եկեղեցին իր ծավալային լուծումով էապես տարբերվում է նույնատիպ հուշարձաններից՝ գմբեթը դրված է ոչ թե դահլիճի կենտրոնում, չորս մույթերի վրա, այլ հենված է արեւելյան զույգ մույթերի եւ աբսիդի անկյունների վրա գցված կամարներին: Ուշագրավ է, որ եթե այսպիսի լուծում չի հանդիպում բուն Հայաստանի եկեղեցիներում, ապա նման հորինվածք ունեն մի այլ գաղթօջախի՝ Թբիլիսիի հայկական եկեղեցիները: Այսպիսին են 18-րդ դ. կառուցված Կուսանաց վանքի Ս. Ստեփանոս, Ջիգրաշենի Ս. Աստվածածին եւ Նորաշենի Ս. Աստվածածին եկեղեցիները:

Քրիստոնեական ճարտարապետության մեջ եկեղեցական շենքի «գմբեթավոր դահլիճի» հորինվածքն ստեղծվեց Հայաստանում 6-րդ դ. (Զվարթնոցի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցի) եւ կատարելագործվեց 7-րդ դ. հայկական դասական հուշարձաններ Պտղնավանքում եւ Արուճի Ս. Գրիգոր եկեղեցում (666 թ.): Նոր Ջուղայում գմբեթավոր դահլիճի չորս որմնամույթերով ենթատիպին են պատկանում Ս. Գեւորգ, Ս. Աստվածածին եւ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները:

Ս. Գեւորգ եկեղեցին կառուցվել է Խոջա Նազարի մեկենասությամբ 1611 թ. Փոքր Մեյդան թաղում: Դահլիճը երկու զույգ խոշոր որմնամույթերով բաժանվում է գրեթե հավասար երեք մասի, որոնցից յուրաքանչյուրն ունի կիսագնդի ձեւի, կենտրոնում երդիկով ծածկ: Նրանցից արեւելյանի վրա՝ տանիքին դրված է փոքրիկ թմբուկով գմբեթ: Եկեղեցին այսպիսի ծածկի ձեւով էապես տարբերվում է Հայաստանի 17-րդ դ. գմբեթավոր դահլիճներից (նման ծածկի ձեւ ունի մի-



Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին





շինությունների համալիրով, որոնց շարքում գտնվում է նաեւ Նոր Ջուղայի այսօր կանգուն հնագույն՝ Ս. Հակոբ եկեղեցին (1607 թ.): Այն միանավ դահլիճ է, ուղղանկյուն խորանով, տանիքին՝ երեք փոքրիկ գմբեթներով, որոնցից միջինն ունի ութանիստ թմբուկ:

Ս. Աստվածածին եկեղեցու պատերը ներսից, 1,35 մ բարձրությամբ, ծածկված են խախճապակե զարդանկարներով, որոնք բնորոշ են 17-րդ դ. պարսկական դեկորատիվ արվեստին: Իսկ դրանցից վերեւ եկեղեցու պատերը, որմնամույթերը եւ կամարները ամբողջովին նկարազարդված են որմնանկարներով եւ զարդանախշերով: Որմնանկարներն ակնհայտ կրում են արեւմտաեվրոպական, առաջին հերթին՝ իտալական կերպարվեստի ազդեցությունը:

Մեկ զույգ որմնամույթերով գմբեթավոր դահլիճներ են Նոր Ջուղայի Ս. Կատարինե կուսանաց վանքի (1623 թ.), Ս. Ներսես (1671 թ.), Ս. Նիկողայոս (1630 թ.), Ս. Բեթղեհեմ եկեղեցիները եւ գաղթօջախի ճարտարապետական գլուխգործոց Ս. Ամենափրկիչ վանքի Ս. Հակոբ Կաթողիկեն:

Մեծ Մեյդան թաղում գտնվող Ս. Բեթղեհեմ եկեղեցին կառուցվել է 1628 թ.՝ Խոջա Պետրոս Վելիջանյանի միջոցներով: Եկեղեցին ունի մեկ զույգ որմնամույթերով գմբեթավոր դահլիճի դասական հորինվածք, որի կենտրոնում բարձրանում է Նոր Ջուղայի եկեղեցիների գմբեթներից ամենախոշորը (ներսի տրամագիծը 12,5 մ է): Ցածր, գլանաձեւ թմբուկի վրա դրված է կրկնակի ծածկ՝ ներսից գրեթե կիսագնդաձեւ (ինչպես ընդունված է հայկական եկեղեցիներում ընդհանրապես) եւ երկրորդ՝ արտաքին, ձվաձեւ ուրվագծով, խոշոր եւ բարձր գմբեթը՝ հար եւ նման մզկիթների գմբեթներին: Ս. Բեթղեհեմ եկեղեցու գմբեթը այս կրկնակի ծածկի շնորհիվ նաեւ ամենաբարձրն է Նոր Ջուղայի եկեղեցիների գմբեթների շարքում եւ բնակավայրի համայնապատկերում աչքի ընկնող ուղղաձիգ շեշտերից է:

Ս. Բեթղեհեմ եկեղեցու դահլիճի արեւմտյան հատվածը կրկնահարկ է, որի վերին հարկ-պատշգամբը նախատեսված է կանանց համար: Իսկ արեւմտյան ճակատին կից, եռակամար, երկհարկ սրահի վրա, տանիքին դրված է ոչ մեծ զանգաշտարակ (1897թ.): Եկեղեցու ներսում, պատերի ստորին մասը որոշ բարձրությամբ ծածկված է խախճապակի սալերով իրականացված զարդանկարներով, իսկ պատերի վերին հատվածները, որմնամույթերը, աբսիդը, թմբուկն ամբողջովին ծածկված են որմնանկարներով: Ուշագրավ է, որ աբսիդի որմնանկարները կրում են հայկական մանրանկարչության Վասպուրականի դպրոցի ազդեցությունը: Ներսի հարդարանքի շքեղությամբ Ս. Բեթղեհեմ եկեղեցին չի զիջում Ս. Ամենափրկիչ եկեղեցու ձեւավորմանը: Որմնանկարների թեմատիկան բազմազան է՝ գմբեթարդին

«Քրիստոսը փառքի մեջ», պատերին՝ «Մկրտություն», «Ս. Աստվածածին», «Գրիգոր Լուսավորչի չարչարանքները», «Համբարձում», «Ս. Ստեփանոսի նահատակությունը», «Ս. Սարգիս», «Ս. Թեոդորոս» եւ ուրիշներ:

Նոր Ջուղայի ամենակարեւոր հուշարձանախումբը Մեծ Մեյդան թաղում գտնվող Ս. Ամենափրկիչ վանքի համալիրն է: 1606 թ. հիմնադրված վանքն իր անունը ստացել է Հին Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի անունով: Իսպահանի թեմի առաջնորդանիստ վանքի Ս. Հովսեփ Արեմաթացի Կաթողիկեն, ըստ շինարարական արձանագրության, կառուցվել է ժողովրդական հանգանակությամբ 1655-1664 թթ. Դավիթ եպիսկոպոսի նախաձեռնությամբ եւ ղեկավարությամբ: Կաթողիկեն ունի առանց ճակատոնների խորանարդաձեւ ծավալ, կենտրոնում ձվաձեւ ուրվագծով խոշոր գմբեթով, որը հենվում է մեկ զույգ հզոր որմնամույթերի եւ հնգանիստ աբսիդի անկյունների միջեւ գցված կամարների վրա: Աղյուսե պատերը դրսից սվաղված չեն (ինչպես Նոր Ջուղայի շատ եկեղեցիները) եւ ունեն սլաքաձեւ կամարներով երկշարք դեկորատիվ խորշեր: Գլխավոր՝ արեւմտյան մուտքը զարդարված է սալակտիտներով եւ երեսպատված ջնարակված սալիկներով: Ներսում պատերի ստորին մասը՝ 1,65 մ բարձրությամբ, պատված է զարդանկարներով հախճապակի սալիկներով, իսկ մնացած ողջ ներքին տարածությունը ծածկված է որմնանկարներով, որոնք բուսական զարդանախշերի ֆոնի վրա պատկերում են Հին եւ Նոր կտակարանների թեմաներով նկարներ, հրեշտակներ, Գրիգոր Լուսավորչի չարչարանքները եւ այլն: Որմնանկարների հորինվածքում օգտագործվել են Եվրոպայից ներմուծված գեղանկարչական աշխատանքներ եւ գրաֆիկական նկարներ: Նրանք կատարել են հայ նկարիչների ձեռքով, որոնց անունները պահպանվել են աբսիդի պատերին (Ավետիք, Սիմոն, Ստեփանոս եւ ուրիշներ): Կաթողիկեի ծավալա-տարածական հորինվածքում գերիշխողը խոշոր գմբեթն է (գլանաձեւ թմբուկի տրամագիծը մոտավորապես 10 մ է), որը կրկնակի է՝ ներքին կիսագնդաձեւ եւ արտաքին՝ ձվաձեւ թաղանթներով:

Կաթողիկեի արեւմտյան կողմում 1702 թ. կառուցվել է եռահարկ զանգակատուն, որի երկրորդ հարկը մատուռ է, նվիրված հրեշտակապետներին:

Նոր Ջուղայում կա եկեղեցու մի տիպ, որը հանդիսանում է այս գաղթօջախի ճարտարապետության զարգացման արգասիքը: Դա «ամառային»՝ բաց աբսիդով եկեղեցին է, որի հորինվածքը ստեղծվել է Իսպահանի շատ շոգ կլիմայի ազդեցությամբ: Այդպիսի «ամառային» բաց աբսիդներ կառուցվեցին 18-րդ դ. Նոր Ջուղայի մի շարք եկեղեցիներին անմիջական կից կամ մոտ: Ս. Սարգիս եկեղեցու հարավային կողմում, նրա արեւելյան ճակատի հետ նույն գծով 1704 թ. կառուցված բաց աբսիդը օծված է ս. Ստեփանոսի անունով, ներսից ուղղանկյուն է, երկու կողմերում սենյակ-ավանդատներով, վրան գլանաձեւ թմբուկով գմբեթ: Ներսից ուղղանկյուն է նաեւ Ս. Մինաս եկեղեցու հարավային կողմի թաղածածկ բաց աբսիդով ամառային եկեղեցին (1713 թ.), նվիրված ս. Աստվածածնին: Ներսից հնգանիստ է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն հարավից կից ամառային եկեղեցին (1714թ.), որի երկու կողքի ավանդատները երկհարկանի են: Եկեղեցին աբսիդի վրա ունի ութանիստ թմբուկով գմբեթ: Նույն ճարտարապետությունն ունի Ս. Նիկողայոս եկեղեցու հյուսիսարեւելյան կողմում կառուցված ամառային եկեղեցին (1774 թ.), նվիրված ս. Ստեփանոսին: 1774 թ. է կառուցված նաեւ Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն հյուսիսից կից հնգանիստ աբսիդ-եկեղեցին, որը տեղի սահմանափակ տարածության պատճառով չունի կից սենյակներ:

Նոր Ջուղայի բաց աբսիդ-եկեղեցիները դարձան նորամուծություն հայկական եկեղեցական ճարտարապետության մեջ, չհանդիպելով ոչ միայն Հայաստանում, այլեւ գաղթօջախներում:

* * *

Նոր Ջուղայի եկեղեցիներն ունեն մի շարք առանձնահատկություններ, որոնք նորույթ էին ոչ միայն հայկական, այլեւ ընդհանրապես քրիստոնեական ճարտարապետության մեջ: Տիպաբանական նորույթը «ամառային»՝ բաց աբսիդ - եկեղեցիներն էին, որոնք ստեղծվեցին տեղական կլիմայական պայմաններին համապատասխան: Նորույթ էին մյուս եկեղեցիների ծավալա-տարածական հորինվածքները: Եթե հատակագծերով եւ ներսի տարածության լուծումներով Նոր Ջուղայի եկեղեցիները կրկնում էին Հայաստանի միջնադարյան եկեղեցիների ավանդական հորինվածքները (գմբեթավոր դահլիճի, խաչանույթ գմբեթավոր բազիլիկի), ապա արտաքին կերպարով, ծավալային հորինվածքով, դեկորատիվ հարդարանքով նրանք միանգամայն ինքնատիպ էին, բացառիկ՝ եկեղեցական ճարտարապետության մեջ:

Նրանց առանց ճակատոնների, աղյուսաշեն ուղղանկյուն ծավալները պսակված են իսլամական ճարտարապետությանը բնորոշ ձվաձեւ, որոշ դեպքերում կրկնակի թաղանթով գմբեթներով: Մզկիթներին բնորոշ գմբեթների կիրառումը հայկական եկեղեցիներում կարելի է բացատրել Իսպահանի բնակչության կրոնական մոլեռանդությունը չգրգռելու եւ թշնամանք չառաջացնելու ցանկությամբ: Պարսկական շինարարական տեխնիկան կիրառվել է նաեւ եկեղեցիների աղոթասրահների արեւելյան եւ արեւմտյան հատվածներում թաղի փոխարեն կիսագնդաձեւ ծածկեր կիրառելով, գմբեթակիր եւ դեկորատիվ կամարների տրածայության, տանիքները եւ որոշ դեպքերում ճակատներն ու գմբեթները «խոգելով» (հարդախառն կավե շաղախով) սվաղելով:

Իսկ եկեղեցիների ինտերյերում խախճապակե սալերով, դեղին եւ կապույտ գույների գերակշռությամբ ծաղկանկարները, «մայոլիկայի» տեխնիկայով զարդանկարները, արտաքին ճակատներում, գմբեթում, շքամուտքերում ջնարակած աղյուսի կիրառումը տիպական են եւ բնորոշ Սեֆյան Իրանի արվեստին: Ինչ վերաբերում է որմնանկարներին, ապա դրանց պատկերագրությունը եւ ոճը հարազատ են 17-րդ դ. արեւմտաեվրոպական, հատկապես իտալական նկարչությանը: Պետք է նշել, որ Նոր Ջուղայի հայ նկարիչների ստեղծագործությունները ազդել են ժամանակի պարսկական նկարչության վրա եւ կա այն հավանական տեսակետը, որ նրանք են Իրանում տարածել կտավի վրա նկարելու արվեստը:

Իրանական եւ հայկական ճարտարապետության այսպիսի սինթեզը, երբ եկեղեցական շենքի հայկական ավանդական հատակագծային հորինվածքը զուգակցվում է մզկիթին բնորոշ ծավալային ձեւերի հետ, իսկ հարդարանքում համատեղված են ուշ միջնադարի պարսկական դեկորատիվ արվեստը, հայկական մանրանկարչության ազդեցությամբ կատարված որոշ որմնանկարները եւ զարդանկարները եվրոպական կերպարվեստի հետ այս բոլորը Նոր Ջուղայի 17-րդ դ. եկեղեցիները բացառիկ են դարձնում ճարտարապետության համընդհանուր պատմության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Հ. Տեր-Հովհաննիսյան, Պատմություն Նոր Ջուղայու, Նոր Ջուղա, հ.1, 1880, հ. 2,1881
- J. Carswell, New Julfa, The Armenian Churches and Other Buildings, Oxford, 1968
- L. Մինասյան, Իրանի հայկական եկեղեցիները, Նոր Ջուղա, 1983
- A. Hakhnazarian, Nor Djulfa (Documents of Armenian Architecture, 21), Venezia, 1991

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՈՐՄՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

Իրանի Սաֆավեան հարստութեան հինգերորդ թագաւոր Շահ Աբբաս առաջինը, 17-րդ դարի առաջին տասնամեակներին, թուրք-պարսկական պատերազմի ընթացքում հայ ժողովրդին բռնի գաղթեցրեց Իրան, հիմնական մասը բնակեցրեց մայրաքաղաք Սպահան եւ մօտակայ շրջաններում՝ Զհարմհալ եւ Փերիա գաւառներում: 1604-1605 թթ. հայերը բնակելով Զայենդէռուդ գետի հարաւարեւմտեան ամայի բաժինը, հիմնադրեցին Նոր Ջուղան:

Շահ Աբբաս Մեծը նպատակ ունենալով նոր բնակիչները, որը իր մէջ էր ներառում հասարակական տարբեր խաւերի ներկայացուցիչներ՝ հոգեւորականներ, վաճառականներ, արհեստաւորներ եւ այլն, կապւեն Իրանին եւ իրենց ներդրումն ունենան երկրի տնտեսական եւ մշակութային զարգացմանը, արտօնութիւններ եւ հնարաւորութիւններ ստեղծեց, որպէսզի իրենց աշխատանքը շարունակեն, այդ պատճառով կարճ ժամանակամիջոցում Նոր Ջուղայում կառուցեցին բնակարաններ, հիմնեցին վաճառատներ, արհեստանոցներ եւ այլն:

Առաւել կապւածութիւն ստեղծելու եւ սիրաշահելու նպատակով հայոց եկեղեցիներ կառուցելու հրամանագիր ստորագրեց: Այդ պատճառով սկսեցին եկեղեցիներ կառուցել:

Սպահանը նոր էր մայրաքաղաք դարձել, երկրի կարող ուժերը միասնաբար լծել էին շինարարական՝ կառուցողական աշխատանքով եւ քանի որ վայելում էին թագաւորի հովանաւորութիւնը, իրենց լաւագոյն ներդրումն ունեցան: Նոր Ջուղայի վաճառականները, որոնք ազդեցիկ եւ կարեւոր խաւ էին դարձել համայնքում եւ արքունիքում ձեռք էին բերել կարեւոր դիրք, շատ մօտ հետեւում էին մայրաքաղաքի ձեւաւորման ընթացքին, նաեւ Եւրոպայի այդ շրջանի առեւտրական կարեւոր երկրներ ճամփորդելով, ծանօթ էին վերածնունդի սկզբնական շրջանի արուեստի ձեռքբերումներին, այդ պատճառով իրենց կարեւոր ներդրումն ունէին Նոր Ջուղայի մշակոյթի, ի մասնաւորի արուեստի զարգացման վրայ:

Սպահանի գլխաւոր հրապարակի շուկայում հայ վաճառականները ունէին թաղամաս: Վաճառական խօջաները մրցակցելով մայրաքաղաքի բարձր դասի հետ, համապատասխան իրենց հասարակական դիրքին, կառուցեցին առանձնատներ, նաեւ ձեռնամուխ եղան կառուցելու եկեղեցիներ: Այս պատճառով է, որ Նոր Ջուղայի որմնանկարչութիւնը երկու ընդհանուր ճարտարապետական կառոյցի է ծառայել՝ կրօնական եւ աշխարհական շինութիւնների: Աշխարհիկ շինութիւնները ընդգրկում էին բնակարաններ, վաճառատներ, արհեստանոցներ եւ այլն: Վերջիններից գրեթէ այսօր ոչինչ չի պահպանւել, իսկ բնակարանների մեծ մասը մանաւանդ վերջին շրջանում ոչնչացւել է, կանգուն բնակարանները պետականացւելով ծառայում են որպէս արուեստի համալսարան, ինչպէս Մարթա Պիտերզի, Խօջա Պետրոսի, Սուքիազի, Դաւիթի բնակարանները:

Կրօնական բնոյթ ունեցող շինութիւնները եկեղեցիներն են: Ըստ Նոր Ջուղայի պատմագրի, ժամանակին 24 Հայոց առաքելական եկեղեցիներ են կառուցւել, բայց ինչպէս նոյն պատմագիրը 19-րդ դարում նշում է, 13 եկեղեցի են կանգուն եղել, որ մինչ այժմ գոյութիւն ունեն, այս առումով անգնահատելի կերպով գերազանցում են աշխարհական կառոյցներին, նմանապէս Սպահանի բնակարաններին եւ թագաւորական պալատներին:

Նոր Ջուղայում կազմաւորուած հայկական թաղերը ունեցան իրենց եկեղեցիները՝ Մեծ Մէյդան (Ս. Յակոբ Մծբնայ, Ս. Աստուածածին, Ս. Բեթղեհեմ, Ս. Ամենափրկիչ վանք), Փոքր Մէյդան (Ս. Գէորգ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ), Զարսու (Ս. Յովհաննէս Մկրտիչ, Ս. Կատարինեան վանք), Յակոբջան (Ս. Ստեփանոս), Ղարագէլ (Ս. Նիկողայոս), Քոչեր (Ս. Ներսէս), Երեւան (Ս. Սարգիս), Դաւրէժ (Ս. Մինաս):

Սկզբնական եկեղեցիները անշուք եւ պարզ կառոյցով են, առաջին եկեղեցին, որ ըստ պատմագրի այսօրուայ Ս. Ամենափրկիչ վանքի տեղում է եղել, նկարագրւել է պարզ, որի անշուքութեան պատճառով խոնարհեցել եւ կառուցւել է նորը:

Ս. Յակոբ Մծբնայ եկեղեցին, որ գտնւում է Ս. Աստուածածին եկեղեցու շրջափակում, կանգուն եկեղեցիներից ամէնից հինն է՝ 1607 թւականով, լաւագոյն օրինակն է առաջին պարզ կառոյց ունեցող եկեղեցիներից, որի ներքին պատերը միայն յիշատակագրութեան բնոյթ ունեցող խաչքարերով են ծածկւած:

Ս. Գէորգ եկեղեցին, որ կառուցւել է 1611 թւականին, դարձեալ պարզ յարդարանք ունի միայն բարձրաքանդակ սւաղեայ հրեշտակներով եւ բեմի առաջամասը յախճապակիով է յարդարւած:

1613 թւականից յետոյ կառուցւած եկեղեցիները, բացի Ս. Նիկողայոս եկեղեցուց, ներքին կառոյցների (բեմը, երբեմն դասի մի մասը եւ գմբեթն) յարդարւել են որմնանկարչութիւնով, յախճապակիներով, յիշատակագրութիւններով եւ խաչքարերով:

Ս. Բեթղեհեմ եւ Ս. Ամենափրկիչ վանքի Արեմտաթացու եկեղեցիները առանձնանում են միւս եկեղեցիներից այն առումով, որ ընդհանուր եկեղեցին գմբեթից մինչեւ յատակ, բոլոր որմերը ծածկւած են որմնանկարներով եւ յախճապակիներով:

«Ցնծող ակն», աջից՝ Յովհաննես Մրուզ:

Որմնանկարները բովանդակութեան տեսակէտից կարելի է բաժանել հետեւեալ կերպով՝

- Աստուածաշունչից դրւագներ՝
- Հին Կտակարան
- Նոր Կտակարան
- Հայոց առաքելական եկեղեցուն յատուկ դրւագներ՝

ինչպէս Ս. Գրիգոր Լուսաւորիչի չարչարանքները, հայոց եկեղեցու խորհուրդները եւ այլն:

- Քրիստոնէական սրբերի կերպարներ:
- Եկեղեցու բարերարի կերպար, որ ներառւել է ոեւէ յօրինւածքում:

Նոր Ջուղայի՝ հայկական եւ Սպահանի՝ իրանական որմնանկարչութեան ձեւաւորման ժամանակաշրջանը (1605-1660 թթ.) համընկնելով, բնական է նմանութիւնների եւ տարբերութիւնների առկայութիւնը, որը փոխազդեցութեան արդիւնք է: Անկախ բովանդակութեան եւ ոճի տարբերութեանը, գրեթէ բոլոր որմնանկարներում տիրական են վառ եւ հակասող գոյները, յատկապէս կարմիր, կանաչ, օխրայ:

Որմնանկարները տոգորւած են պայծառութեամբ ու տօնականութեամբ, իրենց գունային համադրութեամբ աւելի պատկերաւոր ու արտայայտիչ են դարձրել եկեղեցու ներքին տարածքը:

Կանգուն մնացած ճարտարապետական կառոյցները եւ նրանց ներքին հարուստ յարդարանքները արուեստի տարբեր բնագաւառներում աշխատող վարպետների հաւաքական աշխատանքի արտացոլումն են, մեծ մասամբ վարպետների ինքնութիւնը մինչ այժմ անյայտ է մնում, սակայն յիշատակագրութիւններում պահպանւել են մի շարք նկարիչ ծաղկողների անուններ, կարելի է յիշել՝ Մինաս, Մարտիրոս, Աստուածատուր, Աւետ, Տէր Ստեփանոս, Տէր Կիրակոս, Յովհաննէս Մրքուզ եւ ուրիշներ, որոնց ստեղծագործութեան շնորհիւ 17-րդ դարի կերպարուեստի պատմութիւնը հարստացաւ ինքնուրոյն դպրոցով, միատեղ համադրելով եւ ներկայացնելով հայկական, իրանական եւ եւրոպական 17-րդ դարի ժամանակակից արուեստի ձեռքբերումները:

ԱՆԻ ԲԱԲԱՅԱՆ

Ամենափրկիչ վանքի որմնանկարներն այժմ նորոգվում են հնուց վերականգնող Սեդրակ Նազարյանի ձեռով:

Օգտագործւած գրականութիւն

- Աղանեան Ջհնյ. Վ., Նոր Ջուղայի Եկեղեցի Ուխտատեղիներ, Նոր Ջուղա, 2003:
- Առաքել Դաւրիժեցի, Գիրք Պատմութեանց, Երեւան,1990:
- Ղազարեան Մ., Հայ կերպարուեստը 17-18-րդ դարերում, Երեւան, 1974:
- Մարտիկեան Ե., Հայ կերպարուեստի պատմութիւն, Երեւան,1987, 4-րդ հտ:
- Մինասեան Լ., Նոր Ջուղայի Եկեղեցիները, Նոր Ջուղա, 1992:
- Տէր Յովհաննեան Յ., Պատմութիւն Նոր Ջուղայի,Նոր Ջուղա,1981:
- Carswell, J.New Julfa.The Armenian Churches and other Buildings.Oxford,1968.
- Der Nersessian, S., Mekhitaria, A, Armenian Minatures from Isfahan, Brussels,1986.
- Hakhnazarian A., Mehrabian,V.New Julfa. Italy,1992.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՈՐԳԵՐ

Հայ մշակույթի ավանդական բնագավառներից մեկում՝ գորգագործության մեջ վերջին տարիներին նոր խոսք է ասում ԳԱԲ ՀԵՄԱԳ ընկերությունը, որը ժամանակակից ձեռագործ գորգերի նորարար մի կազմակերպություն է: Ստեղծվել է 1998-ին, որպես ֆրանս-հոլանդական կազմակերպություն եւ նույն թվականին գրանցվել Հայաստանում: Հիմնադիր տնօրեն Գաբրիել (Կարոիս) Զաֆալյանը մինչ այս գործի ձեռնարկումն այցելելով Հայաստան՝ մտածում էր հայրենանոպաս մի գործ հիմնել, աշխատատեղեր ստեղծել: Ընտրելով գորգագործությունը՝ նա որոշեց թարմություն հաղորդել այդ ավանդական գործին եւ ստեղծել նոր պատկերագրությամբ գորգեր: Հետս չէր նաեւ արտադրության կազմակերպման տեղի ընտրությունը: Ի վերջո ընտրվեց Չարենցավան քաղաքը, ուր այժմ գործում է ընկերության արտադրամասը: Գորգերը պատրաստվում են զանազան թեմաներով՝ պատմական, կրոնական, կենդանակերպի նշաններով, գյուղական կյանքի տեսարաններով եւ ժամանակակից նկարիչների ամենատարբեր ոճ ունեցող ստեղծագործությունների պատկերներով:

Անցած տարիների ընթացքում ԳԱԲ ՀԵՄԱԳ ընկերությունն իր գորգերի ցուցահանդեսներ է կազմակերպել Ֆրանսիայում, Գերմանիայում, Հոլանդիայում եւ իհարկե Հայաստանում:

Մեր թղթակցի հետ ունեցած զրույցի ժամանակ տնօրեն Գաբրիել Զաֆալյանը նշեց իրենց գորգերի երկու առավելության մասին. նախ՝ որոշ գորգեր ունեն մինչեւ 39 երանգ, այն դեպքում, երբ ավանդական գորգագործության մեջ երանգները չեն գերազանցում 8-ը: Երկրորդ՝ գորգերն ունեն կոլեկցիոն արժեք, պատրաստվում են սահմանափակ քանակով՝ 7 կամ 51 հատ, յուրաքանչյուրը թվագրվում է եւ ստորագրվում նկարչի, ընկերության եւ գորգագործների կողմից:

Տնօրենը նաեւ նշեց, որ առաջիկայում մտադիր են ցուցահանդեսներ կազմակերպել Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Կանադայում: «Հայաստանը գորգարվեստի հնագույն երկիր է, որոշ ուսումնասիրողների կարծիքով՝ հենց գորգի ծննդավայրն է, ուստի մենք պետք է կարողանանք ցույց տալ, որ այս մշակույթը Հայաստանում ոչ միայն շարունակվում, այլեւ զարգանում է նորարարական մոտեցումներով»,- ասում է Գ. Զաֆալյանը:

Ընկերության գրասենյակը գտնվում է Երեւանում (Բուզանդի 4, հեռ. 581743, E-mail g.hemag@netsys.am www.ghemag.com):

Առաջիկայում ԳԱԲ ՀԵՄԱԳ ընկերությունը մեծ ցուցահանդես է կազմակերպելու Հայաստանի Ազգային պատկերասրահում՝ ներկայացնելով նախորդ տարիների լավագույն գորգերը եւ ամենանոր աշխատանքներ, նաեւ արտ դեկո ոճի աշխատանքներ: Ցուցահանդեսը կդառնա այս ընկերության ծավալած գնահատելի աշխատանքի յուրօրինակ հանրագումարը:

ԳԱԲ ՀԵՄԱԳ ընկերության հիմնատիպ գորգերի ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ տեղի կունենա սեպտեմբերի 18-ից հոկտեմբերի 2-ը Հայաստանի Ազգային պատկերասրահում:

Սայաթ-Նովա

Այնեղջյուր

Ուրարտու

Խոյ

Գիրքի ծաղիկներ

Խնջոյք

Սոր Ջուղա 400



Սբ. Բեթղեհեմի եկեղեցու ներսը

Սբ. Սարգիս եկեղեցու գմբեթը ներսից

Սբ. Աստվածածին եկեղեցին

Սբ. Ստեփանոս եկեղեցին

Սբ. Ամենափրկիչ վանքի արտաքին եւ ներքին տեսքը

Ես եկել եմ Հայաստան

Milanda DeMont

1

2

3

4

5

Իմ արմատը փնտրելու

Միլանդա դը Մոնթ

Ավստրալիայի արդի առաջատար արվեստագետներից մեկը՝ մեր հայրենակից նկարչուհի Միլանդա դը Մոնթը 2004-ի մայիսին Գոսֆորդի պատկերասրահի «Հետագիծ» ծրագրով առաջին անգամ եկել էր Հայաստան: «Հայ արվեստ» հանդեսի խմբագրությունում նա պատմեց իր եւ իր ստեղծագործության մասին: Ծնվել է Պարսկաստանում, Համադանում: Ինչպես ինքն է ասում. «Գալիս եմ երկու արվեստագետների ընտանիից՝ Նիկոլ Ալվանդի, որ առաջին ջազմենն էր Պարսկաստանում եւ հանրահայտ երգիչ Վիգենը: Մորս կողմից հայտնի են գրող Սերոբ Վարդանյանը (որ գնացել է Հոլանդիա, ապա ԱՄՆ), պապս խարգործ վարպետ Սարգիս Գրիգորյանն է՝ ջուղայեցի»: Նկարել սկսել է մանկուց, ուսանել Ֆրանսիայից եկած Սերժ անունով ուսուցչի մոտ: «7-8 տարեկանում սովորել եմ գեղագրություն եւ մանրանկարչություն, 11 տարեկանից աշխատել եմ յուղաներկով, - ասում է Միլանդան, - 1967, 1968, 1969 թվականներին Պարսկաստանում ոսկե մեդալ եմ ստացել մանրանկարչության համար»:

1970-ին ընտանիքով տեղափոխվել են Ավստրալիա: Միլանդան սովորել է մի դպրոցում, ուր հայեր քիչ կային: Շարունակել է արվեստով զբաղվել եւ սովորել գրաֆիկական դիզայնի ուղղությամբ: Այդ մասնագիտական կրթությունը կատարելագործել է ԱՄՆ-ում (1977-82 թթ.):

Վերադառնալով Ավստրալիա՝ համագործակցել է տեղի հեղինակավոր պատկերասրահների հետ, ունեցել է բազմաթիվ ցուցահանդեսներ, շահել մրցանակներ Ավստրալիայում, Ասիայում եւ Եվրոպայում:

«Կրթությանս հիմքը ռեալիստական նկարչությունն էր,- ասում է Միլանդան, - սակայն տարիների ընթացքում դարձել եմ ավելի ազատ (վրձինս, գույները, ֆորմաները ազատվել են): Ինձ համար կարեւոր է, որ գիծն ինքը կարողանա իրեն «բացահայտել»: Բայց եթե նկարչական կայուն հիմք չլինի, հնարավոր չէ այս կոնցեպցիայով նկարել: Օրինակ, ես լավ գիտեմ ստատիկ մարմինը, որը դյուրացնում է նաեւ նրա շարժումը պատկերելը (պար, շարժում նկարելը, որը էներգիայի արտահայտություն է):

Ինձ համար շատ կարեւոր են գույները: Ես Պարսկաստանը, ես Ավստրալիան գույների երկիր են (ուրախ եմ, որ Հայաստանն էլ այդպիսին է): Իմ արվեստանոցը բնության մեջ է, ամեն օր ոգեւորվում եմ բնության ու նրա գույների հետ: Երբ գալիս եմ քաղաք, հակադրություն է առաջանում եւ մնում եմ մեջտեղում: Ես գործում եմ ամբողջ օրը, ոչ միայն նկարում եմ, այլեւ կարդում եմ ու բանաստեղծություններ գրում:

Արվեստն ինձ համար անսահմանություն է: Ինչպես որ տիեզերքը չունի հորիզոն, այնպես էլ արվեստը: Երբ նկարում եմ, այս աշխարհի վրա չեմ եւ թույլ եմ տալիս, որ ենթագիտակցությունն ինձ առաջնորդի»:

«Ինչպե՞ս տեսաք Հայաստանը» հարցին Միլանդան պատասխանեց՝ շատ գույներով: Այդ ավելացրեց. «Ինձ գերեց հայաստանցիների ջերմությունը, մարդկանց մտերմությունը, որը ուրիշ տեղ չեմ տեսել: Երկու անգամ գնացի Խոր Վիրաբ, առաջին անգամ տեսնելու համար, երկրորդ անգամ՝ աղոթելու: Ինձ համար շատ տպավորիչ էր այդ զուգադրումը՝ Արարատ, Նոյ եւ քրիստոնեության ընդունումը որպես առաջին երկիր: Շատ առարկայական դարձավ այս հոգեւոր կապը: Հայաստանը քաղաքակրթության օրրան է, եւ ես եկել եմ այստեղ իմ արմատը փնտրելու»:

Միլանդայի արվեստով հետաքրքրվողներին առաջարկում ենք ծանոթանալ նրա ինտերնետային էջին www. Harriscourtingallery.com.au



1. One Makes a Difference, 2003
2. Women Dreaming, 2001
3. Like a Song, 2000
4. Cloud Burst, 2003
5. Form is Land, 1999

Նոր Զուղայի Սբ. Վանքի «Ամենափրկչեան» թանգարան

«Նոր Զուղայում հիմնված ազգային հաստատություններից մեկը Ամենափրկիչ վանքի թանգարանն է, որ հանդիսանում է ոչ միայն տեղի, այլ նաեւ իրանահայության եւ համայն հայ ժողովրդի պարծանքներից մեկը»:

Լեւոն Մինասյան
«Նոր Զուղայի թանգարանը», Նոր Զուղա, 1968:

Նոր Զուղայի 400-ամեայ պատմութիւնը ուսումնասիրելիս անհնար է չանդրադառնալ Սբ. Վանքի «Ամենափրկչեան» թանգարանի պատմութեանը:

Չգիտեմ երբեւէ այցելած կա՞ք «Ամենափրկչեան» թանգարանը: Եթէ այցելել էք, անշուշտ հետեւեալ տողերը վերյուշ կը դառնան, իսկ եթէ ոչ, երեւակայութեան թռիչքով կը մեկնենք Նոր Զուղա, «Ամենափրկչեան» թանգարան: Այնտեղ որքէս այցելու կը յիանաս, սակայն որքէս հայ այցելու եւ կը յիանաս, եւ կը ուրախանաս եւ կը տխրես, կամ գուցէ հոգուդ խորհում լուռ արտասուես...

Այստեղ, պատմութեան գեղեցիկ եւ տխուր պահերը մեզ կը պարգեւեն տարբեր զգացումներ, այնուամենայնիվ այցելութեան աւարտին մի անբացատրելի զգացում կը ողողէ ողջ մեր էութիւնը՝ այն եզակի, անկրկնելի եւ հարուստ մշակոյթին պատկանելու հպարտութեան զգացումն է, որը միշտ հայ տարագիր ժողովրդի հոգու ցաւերին բալասան կը դառնայ եւ կը մխիթարէ նրան...

Ինչեւէ:

Իրան: Նոր Զուղա: Սբ. Ամենափրկիչ վանք: «Ամենափրկչեան» թանգարան:

Մայր հողից բռնի բեկած, բայց երբէք չընկճուած մի բուռ ժողովրդի պատմութեան շեմարան:

Թանգարանի նորակառոյց շէնքը թէեւ կրում է 1971 թւականը, այն ունի աւելի հին պատմութիւն: Դեռեւս 1905-06 թթ. Սբ. Ամենափրկիչ վանքի մատենադարանը ունէր թանգարանին բնորոշ նկարագիր: Այնտեղ բացի ձեռագիր մատեաններից ցուցադրւում էին իւղաներկ պատկերներ եւ հնագիտական իրեր: Ականատես դէմքեր յանձինս Իրանում Հայաստանի առաջին հանրապետութեան դեսպան, իշխան Յովսէփ Արղութեանի եւ Իրանի տեղեկատու բիւրոյի վարիչ Գեւորգ Ստեփանեանի, եկել այցել են մատենադարան-թանգարան եւ իրենց դրատանքի խօսքերն են տողանցել յուշամատեանում:

Իսկ 1930 թւականը նոր էջ է բացում թանգարանի պատմութեան մէջ: Ազգային իշխանութիւնը ընթացք տալով Նոր Զուղա ժամանած անանի գեղանկարիչ Սարգիս Խաչատրեանի առաջարկին, մատենադարանի շէնքը ամբողջովին հատկացնում է թանգարանին: Ստեփան Հանանեանի եւ Մարտիրոս Աբգարեանի համատեղ ջանքերով եկեղեցիներից հաւաքւում են ծիսական անօթներ, հոգեւոր հանդերձներ, գեղանկար կտաւներ ու թանկարժէք իրեր, եւ ստեղծւում է թանգարանը, որը շուրջ 40 տարի համարւում էր ոչ միայն իրանահայութեան, այլեւ ամբողջ հայութեան պարծանքը:

Հետագայում եւ՛ այցելուների, եւ՛ առարկաների քանակի ավելացման բերումով ազգային իշխանութիւնը որոշում է Սբ. Վանքի հիւսիսարեւելեան հատածում կառուցել արդիական ոճով երկհարկանի մի շէնք՝ թանգարանային գրեթէ բոլոր հարմարութիւններով: 1971 թւականի հոկտեմբերի 19-ին նորակառոյց թանգարանը ճարտարապետ Ժենիա Աֆթանդիլեանի եւ Բելգիայի մայրաքաղաք Բրուքսելի համալսարանի դասախօս, պրոֆ. Արբակ Մխիթարեանի նախագծութեամբ բացւած է յայտարարւում բոլորի առջեւ: Մուտքի աստիճանները վեր են բարձրանում, մի պահ կանգ առնում մեր պատմութեան պայծառ դէմքերի կիսանդրիների առջեւ: Թանգարանի մուտքի երկու կողմերում զետեղւած են Սբ. Մեսրոպ Մաշտոցի եւ Նոր Զուղայի, ինչու չէ նաեւ Միջին Արեւելքի առաջին տպագրութեան հիմնադիր Խաչատուր վրդ. Կեսարացու կիսանդրիները, որոնք պատրաստել են անանի քանդակագործ (այժմ Հռոմում բնակւող) Զաւէն Այազեանի ձեռամբ 1975 թւին:

Բուն թանգարանում առաջին իսկ քայլերից ցուցադրւած առարկաներին միացած Կոմիտասի երաժշտութիւնը հոգեւոր զգացմունք է ներշնչում այցելուին, առաւել եւս հայ այցելուին...

Այցելութիւնը սկսում ենք Նոր Զուղայի պատմութեան սկզբնական էջերից՝ Սէֆեան դինաստիայի նշանաւոր Շահերի հրովարտակներից, որոնցով պարսիկ արքաները որոշ իրաւասութիւններ են ընձեռել հայերին, մասնաւորապէս հայ վաճառականներին:

Հրովարտակներին կից զետեղւած է Նոր Զուղայի 3-րդ տպագրութեան մամուլը հիմնւած 1841 թւին Անգլիայում: Մամուլին յաջորդում է Խաչատուր վրդ. Կեսարացու անխոնջ ջանքերով տպագրւած առաջին գիրքը՝ «Սաղմոս Դաւթի» 1637 թւին (Սբ. Վանքում տպագրւած առաջին գրքից ամբողջովին կայ միայն մէկ օրիգինալ օրինակ, որը գտնւում է Անգլիայի Օխֆորդ քաղաքի «Բոդլէան» գրադարանում), 2-րդը՝ «Հարանց վարքը» 1641 թւին, 3-րդը՝ «Խորհրդատետրը» 1641 թւին, իսկ 4-րդը «Ժամագիրքը» 1642 թւին: Յատկանշական է, որ սոյն գրքերի հարեւանութեամբ գտնւում են նաեւ Յակոբ Մեղապարտի տպագրած գրքերից երկուքը՝ «Ուրբաթագիրքը» եւ «Պատարագատետր» (1512-13 թթ.) եւ Մադրասում տպագրւած առաջին հայերէն ամսաթերթը՝ «Ազդարարը» (1794 թ.):

«Ամենափրկչեան» թանգարանը անակնկալ է պարգեւում հոլանդացի մեր այցելուներին: Ոսկան վրդ. Երեւանցու տնաջան աշխատանքով Ամստերդամում 1666 թ. առաջին անգամ լոյս տեսաւ հայերէն լեզուով տպագրւած «Աստւածաշունչը»: Հետաքրքիր պատմութիւն կայ կապւած այս գրքի տպագրութեան եւ աշխարհահռչակ գեղանկարիչ Ռեմբրանդի հետ: Թերթելով Յովհաննէս Ղուկասեանի «Ոսկան Երեւանցի» գրքի 481-րդ էջը՝ կցանկանայի մէջ բերել հետեւեալ տողերը՝

- Դուք ինձ պարտաւորեցրած կլինէք եթէ յանձն առնէիք փոխարէնը այժմ մամուլի տակ գտնւող հայոց լեզուով տպագրւող «Աստւածաշունչի» պատկերները: (Ոսկան վարդապետը խնդրեց Ռեմբրանդին).

- Տխուր եմ, որ սխրւած եմ մերժել - ասաց նա, եւ աչքերս են տկարել եւ՛ հոգիս...

Սակայն Ռեմբրանդը կամ այլ խօսքով Հարմենսօն վան Ռէյն Ռեմբրանդը բարի եղաւ պատփրելու իր վերջին աշակերտ Ասադ դէ Հելդերին որդէսգի փոխարէն սրբոյ պատկերները (Հարմենսոն կամ Արմենսօն ֆլամեներէն կը նշանակէ հայու որդի: Համաձայն որոշ ուսումնասիրութիւնների՝ Շահ Աբասի բռնագաղթից յետոյ 17-րդ դարի սկզբում մի խումբ հայեր բնակութիւն են հաստատում Հոլանդիայի Լէյդէն քաղաքում, ուր ջրաղացպանի ընտանիքում ծնւում է Հարմենսոն վան Ռէյն Ռեմբրանդը):

Հոլանդացիները դեռեւս զարմանալու այլ պատճառ ունեն մեր թանգարանում տեսնելով Ռեմբրանդից «Հայր Աբրահամ» գծանկարը, որը մեծ յիացմունք է առաջացնում (հնարավոր է, որ աշխատանքն ընդօրինակություն է - խմբ.):

Եւ վերջապէս Հոլանդիայի եւ մեր թանգարանի առնչութիւնները փակենք պատին ագուցւած հայերէն հրատարակած «Համատարած աշխարհացոյց»-ի առաջին քարտեզով, ստեղծւած Ադրիանոս եւ Պետեր Շխոնեբեկ եղբայրների հեղինակութեամբ 1695 թւին Ամստերդամում:

«Ամենափրկչեան» թանգարանում ցուցադրւած են պարսից արքունիքում աշխատած հայ բարձրաստիճան եւ անանի անձանց պատկերներ, Նոր Զուղայի եւ շրջակայ գիւղերի տարազներ, հոգեւորականների հանդերձներ, եկեղեցա-ծիսական անօթներ, խաչեր, նաեւ Քրիստոսի, Աստւածամօր եւ առաքելների պատկերներ, որոնք պատկանում են հայկական, իտալական եւ ֆլամանական արուեստին:

Կանայք սովորաբար խանդաւառութեամբ են դիտում թանգարանի ճենապակիների հաւաքածոն, որ ներկայացնում է մեծ մասամբ չինական, պարսկական, անգլիական եւ հայկական արուեստը:

Այցելուները սովորաբար ծիծաղով են թողնում թանգարանի այն հատւածը, որն առնչւում է 17-րդ դարի պարսկական արուեստին պատկանող արտօրամանին: Հետաքրքիր պատմութիւն կայ կապւած այս առակէ երկարավիզ ամանի հետ. ասւում է, թէ ժամանակին, երբ չի եղել արագ երթեւեկութեան հնարաւորութիւն՝ տանից հեռու տղամարդու համար եկար ժամանակ է պահանջւել մինչեւ տուն դարձը (տղամարդը պատերազմի կամ առեւտրականութեան պատճառով սխրւած թողնում էր ընտանիքը եւ երկար ժամանակ բացակայում): Այդ ընթացքում տառապող կինը, որդէսգի առգացուցի իր ամուսնուն, թէ որքան է արտասուել նրա բացակայութեան պատճառով, արցունքները կաթիլ առ կաթիլ հաւաքել է արտօրամանում: Ընդհանրապէս տղամարդիկ ժպիտով ասում են «Համոզա՞ծ էք, որ կանայք աղաջրով չեն լցրել անօթը...»: Զանց առնելով ծիծաղայարոյց նման միջադէպը, ասենք, որ անշուշտ արտօրամանը ժամանակին պարսիկ կնոջ համար եղել է սիրոյ, ամուսնու տունդարձի սպասումի ու յոյսի խորհրդանիշը:

Իսկ մայր հողից ժամանակավոր հեռացած Հայաստանի մեր հայրենակիցները, թանգարանում դիտելով Սարգիս Խաչատրեանի վրձինին պատկանող Սեւանայ լճի հրաշալի գիշերային պատկերը եւ Արարատ լեռան գեղեցիկ կտաւը՝ անպայման կը հագեցնեն իրենց կարօտի ծարաւը, թերեւս ակամա յիշելով Չարենցի տողերը.

«Աշխարհ անցիր Արարատի նման ճերմակ գագաթ չկայ...»:

Մինչդէռ մեզ, սփիւռքահայերիս, կը մնայ պատկերը, բանաստեղծութիւնները եւ կարօտի բուռն զգացումը...

Երեւանի Մաշտոցեան Մատենադարանից, Երուսաղեմի Սբ. Յակոբ վանքից եւ Վենետիկի Մխիթարեան միաբանութիւնից յետոյ Նոր Զուղան հարատ է գրաւելու չորրորդ կարգը՝ հայերեն ձեռագիր մատեանների ճոխ հաւաքածուով: Մեծ ճաշակով եւ գեղագիտական բարձր ընբռնումով կազմւած ձեռագրերը ընդգրկում են՝ Աստւածաշնչեր, Աւետարաններ, պատարագատետրեր, կանոնագրքեր, ճաշոց, յայսմաւուրք... որոնք մեզ են հասել Վանից, Անիից, Արճեշից, Տարօնից, հեռաւոր Կիլիկիայից, Կեսարիայից... յիշւած ձեռագրերին անկասկած պէտք է գումարել նաեւ Նոր Զուղայում գտւած սրբոյ աւետարանները:

«Ամենափրկչեան» թանգարանում ամենահին ձեռագիրը 10-րդ դարի մագաղաթեայ երկաթագիր Աւետարանն է, որը կարելի չէ տեսնելու ու չզմայլւել... Բոլորից ծանր ձեռագիրը «Յայսմաւուրքն» է (16.5 կգ)՝ գրւած 15-րդ դարում Շատվանում, իսկ բոլորից փոքրը 18-րդ դարում գրւած աղօթագիրքն է 52 գր): Աւելացնեմ նաեւ, որ այցելուներին մեծ յիացմունք է պատճառում այսպէս կոչւած աշխարհի ամենափոքր տպագիր գիրքը՝ 0.7 գրամանոց, Տերունական աղօթքը տպագրւել է 7 լեզուներով, 14 էջի մէջ: Այս գիրքը տպագրւել է մամուլի հիմնադիր Գուտենբերգի մահւան 500-ամեակի առիթով:

Թէեւ արդի աւետս, սակայն այցելուների մեծ ուշադրութեանն է արժանանում 1974 թւին Վահրամ Յակոբեանի՝ մագի վրայ գրած հայերիս համար հայտնի բառերը՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ իմանալ զբանս յանճարոյ»: Այս աշխատանքը կարելի է նմանեցնել հայաստանում Էդուարդ Ղազարեանի կատարած աշխատանքների հետ:

Նոր Զուղայի հայոց թեմի, Թեհրանի «Հուսկ» (Հայկական հարցերի ուսումնասիրութեան կենտրոն) հաստատութեան եւ Դրօ Արզուեանի համատեղ նախագծութեամբ ու գործադրութեամբ 19 յուլիսի 2000 թւին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Վեհափառ հայրապետի ձեռամբ բացւած յայտարարւեց թանգարանում զետեղւած Հայոց ցեղասպանութեան տաղաւար: Այն ընդգրկելով Հայոց ցեղասպանութեան բռնազէ քարտեզ, պատկերներ, գրքեր, ցուցադրող փաստավաւերական տեսանիւթեր, մեծապէս նպաստում է այցելուներին ճանաչեցնելու 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւնը: Երեւի զարմանք, եթէ ասեմ, որ այս տաղաւարի առջեւ տարբեր ազգերի ներկայացուցիչներ արտասուել են...

Թանգարանի երկրորդ հարկ բարձրանալիս այցելուն կարող է

դիտել արտաքսակերներ 1955 թվին Աբրահամ Գուրգենեանի ձեռամբ Նոր Ջուղայի հայոց գերեզմանատան տապանաքարերից:

Երկրորդ հարկում ցուցադրուած է 19-րդ դարի պարսկական արւեւսին պատկանող յախճապակիների ընտրանի՝ մասամբ պատկերազարդուած պարսիկ շահերի աւանդական խնջոյքների տեսարաններով, որսորդներով եւ ձիաւարներով:

Ուշադրութեան արժանի է 19-րդ դարին պատկանող յախճապակու վրայ դաջուած «Նշանի հայ թագաւորացը», որի նախագիծը գրեթէ նման է Հայաստանի Հանրապետութեան այժմեան գերբին:

Յախճապակիներին յաջորդում են 17-րդ դարի խաչքարերի փոքրիկ ցուցանմուշներ:

Դանդաղելով մեր քայլերը՝ փոքր-ինչ կանգ առնենք հայ ֆիդայի եւ իրանական յեղափոխութեան գործիչ Եփրեմ խանին պատկանող ցուցափեղկի դիմաց, ուր զետեղել են իրեն պատկանող տարբեր զինառակներ: Եփրեմ խանը, զինտարգելելով Իրանի հակաֆէօդալական յեղափոխութեանը, դարձաւ ականաւոր կազմակերպիչներից եւ ղեկաւարներից մէկը (1905-11): Իրանի կառաւարութիւնը բարձր գնահատելով Եփրեմ խանի ծառայութիւնը՝ նրան շնորհեց «Սարդարի» (գերագոյն զօրահրամանատարի) կոչումը:

Թանգարանի երկրորդ հարկում այցելուն կարող է դիտել Կիլիկեան Հայաստանի անւանի մատենագիր, եկեղեցական գործիչ Ներսես Լամբրոնացու «Խորան» պատկերը ձեռագիր Աւետարանից (1193թ.) եւ գեղեցիկ մանրանկար՝ Կիլիկիայի մանրանկարչութեան դպրոցի խոշոր ներկայացուցիչ Սարգիս Պիծակից (1330 թ.):

1666 թվին Նոր Ջուղայում Խոջա Զաքարի հոր՝ Սարհատի արհեստանոցում պատրաստւում է յայտնի «Ադամանդեայ գահ»-ը, որ այժմ Կրեմլի զինապալատի բարձրաւոս առարկաներից մէկն է: Սոյն գահը նիրելով Ռուսաց Ալեքսէյ Միխայիլովիչ ցարին՝ հայերը առեւտրականութեան ասպարեզում ստացան որոշ արտօնութիւններ: Նշուած գահից մեզ մնացել է միայն թանգարանում ցուցադրվող լուսանկարը:

Հայաստանի Հանրապետութեան ցուցափեղկ: Այստեղ գրեթէ բոլոր այցելուները եկար ժամանակ են հատկացնում դիտելու հայկական հին ու նոր դրամներ, նամականիշեր, անցագրեր, եռագոյն դրօշի նմուշներ... որոնք ամբողջովին ասես ներկայացնում են փոքրիկ Հայաստան:

Թանգարանում ցուցադրւում են նաեւ Կիլիկեան թագաւորութեան մեսաղադրամներ, հոգեւոր պաստառներ, գորգի նմուշներ, փայտեայ գանձարկղներ, Սբ. Աջի պահարաններ, ասեղնակար վարագոյրներ, սփռոցներ, լարային նագարաններ, գրակալ, ժամացոյց, կաթողիկոսական կոնդակներ, հնագիտական իրեր եւ այլն: Վերջում նշեմ, որ մեր թանգարանում կարող էք դիտել Յովհաննէս Այվազովսկիի վրձնին պատկանող «Սուլթան Ահմէդ մզկիթը»՝ երբեմնի քրիստոնեայ ճարտարապետների ձեռքով կառուցած եկեղեցու գեղանկարը:

Սբ. Ա. Վանքի «Ամենափրկչեան» թանգարանին նուիրած ամփոփ այս գրութիւնը ուզում եմ աւարտել յուշամատեանում արձանագրած մի քանի բառերով:

Ցնայած տարբեր լեզուներով զանազան դաւանանքի մարդիկ գնահատանքի բազում խօսքեր են ուղղել Սբ. Վանքին եւ թանգարանին, կուզէմ այս մեկ յիշատակը արտագրել, որի հեղինակը, ինչպէս ասւում է, անյայտ մի հայ է:

«Երբ նայում էի Նոր Ջուղայի Վանքի եւ թանգարանի հնութիւններին, թւում էր, թէ ապրել եմ դարեր առաջ եւ իմ աչքերով տեսնել ստեղծագործ անմահ վարպետներին... երբէք աչքիս առաջից չպիտի հեռանայ այն ինչ տեսայ եւ չպիտի մոռանամ մեր պատեղի նախնիներին...»:
Այցելե՛նք մեր թանգարանը...

Վիոլետ Մաթէոսեան
«Ամենափրկչեան» թանգարանի աշխատակից

Արգամ Այվազյան

«ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ»

հատոր Ա, ՋՈՒՂԱ, Երեւան, 2004

Հայագետ Արգամ Այվազյանը 1965 թ.-ից զբաղվում է այժմյան Նախիջեւանի Հանրապետության կազմում 1921 թ. աթոռիճաբար ընդգրկված պատմական Հայաստանի Գողթն, Երնջակ, Նախճավան, Շարուր, Ճահուկ-Շահատոնի գավառների պատմաճարտարապետական ժառանգության, պատմության ու մշակույթի, արվեստի ու վիմագրության ուսումնասիրությամբ:

Խորհրդային տարիներին Ա. Այվազյանը, փաստորեն, միակ մասնագետն էր, որ բազմաթիվ արգելքներ հաղթահարելով հետեւողականորեն զբաղվել եւ այսօր էլ զբաղվում է այդ հայաշխարհի նյութական մշակույթի ուսումնասիրմամբ եւ մասսայականացմամբ:

2002 թ.-ից հեղինակը ձեռնամուխ է եղել նաեւ նախիջեւանյան արժեքների վերաբերյալ «Բանված հայաշխարհ» տեսաֆիլմաշարի ստեղծման դժվարին եւ նյութական միջոցներ պահանջող աշխատանքին: Ֆիլմաշարը կազմված է 6 ֆիլմերից եւ ընդգրկելու է նախիջեւանյան գավառների բոլոր բնակավայրերի պատմաճարտարապետական, մշակութային արժեքները՝ սկսած Ք. ա. 3-րդ հազարամյակից մինչեւ մեր օրերը: Ֆիլմաշարի առաջին՝ «Խզված մեղեդի՝ Ջուղա» երկմասանոց ֆիլմը Ա. Այվազյանը հանդիսատեսի դատին ներկայացրեց այս տարվա հունվարին:

«Նախիջեւանի վիմագրական ժառանգությունը» շարքի առաջին հատորը նվիրված է Ջուղային: Սվյարածավալ հատորը ընդգրկում է շուրջ 1200 վիմագիր, որոնցից մոտ 900-ը հայագիտությանը ներկայացվում է առաջին անգամ: Հատորում զետեղված է շուրջ 900 լուսանկար, որոնցից 120-ը գունավոր:

1998-ին մասամբ, արդեն 2002 թվականին հիմնահատակ ավերված Ջուղայի խաչքարերի անտառը փաստագրող այդ լուսանկարները, որոնց շուրջ 80 տոկոսն առաջին անգամ է տպագրվում, վիմագրերի վերծանությունների եւ գրչանկարների հետ բացառիկ նշանակություն ունի: Հատորը կազմված է երկու մասից, որոնցից առաջինը ներկայացնում է Ջուղայի պատմական, մշակութային անցյալը, իսկ 2-րդը՝ վիմագրական հուշարձանները:

Հայագիտության, հայոց պատմության եւ մշակույթի բնագավառում գիտական կարեւոր արժեք ունենալուց զատ այս աշխատությունը ունի նաեւ քաղաքական նշանակություն: Ցավալի է, որ այսքիսի կարեւոր հատորը լույս է տեսել ընդամենը 200 օրինակով:

Հատորը տպագրվել է հեղինակի անձնական միջոցներով: Տպագրման ծախսերին աջակցել են նաեւ նախիջեւանցիները եւ հեղինակի մերձավորները:

Հեղինակին մաղթում ենք հաջողություն իր ազգանվեր գործում: Վաղուց ժամանակն է, որ Արգամ Այվազյանի գործունեությունը հովանավորվի պետականորեն:

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Դարերի փորձությունների բովով անցած ու մեզ հասած հայերեն շուրջ 30 000 ձեռագիր մատյանների մեջ առավել մեծ թիվ են կազմում ավետարանները: Դրանցից ամենանշանավորները հատուկ անուններ ունեն, ինչպես օրինակ՝ Էջմիածնի Ավետարան (ժամանակին Էջմիածնի մատենադարանի հնագույն ձեռագիրը), Լազարյան Ավետարան (հայերեն հնագույն թվակիր մատյանը, որ պահվել է Լազարյան ճեմարանում), Մլքե թագուհու Ավետարան (Վասպուրականի Մլքե թագուհու ստացած մատյանը), Հաղբատի Ավետարան (Հաղբատի վանքում գրված եւ Անիում նկարազարդված մատյանը) եւ այլն: Հնությամբ կամ մանրանկարչական հարստությամբ աչքի ընկնող այդ մատյանները հատուկ անուններ են ստացել գրչության կամ պահպանության վայրի տեղանունից, երբեմն էլ պատվիրատուի (ստացողի) անունից:

Հայկական նշանավոր մատյաններից հատուկ անուն ունենալու պատվին արժանացած եւ ժամանակագրական առումով ամենանոր մատյանը կոչվում է Նոր Ջուղայի Ավետարան: Գրվել է 1610 թվականին Նոր Ջուղայում խոջա Ավետիքի պատվերով, գրիչ եւ մանրանկարիչ Հակոբ Ջուղայեցու ձեռքով, այժմ պահվում է Երեւանի Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանում (ձեռ. թիվ 7639): Ձեռագրի հիմնական արժեքը նրա բարձրարժեք եւ սովորականից բազմաքանակ մանրանկարների մեջ է:

Հիշատակարանում գրիչն անդրադառնում է ջուղայեցիների գաղթին, ապա եւ Նոր Ջուղայի հիմնադրմանը, նշելով որ մատյանն ավարտել է «ի դառն, վշտակիր, մրուր եւ տարտամ ժամանակիս», երբ «թագաւորն պարսից... աւերեաց զտունն Հայոց» իսկ ժողովրդին «արմատախիլ արար եւ երեր մինչ ի վիճակն եւ աստ նաւահանգիստ արար եւ բնակեցոյց»: Հիշատակագիրը շարունակելով գրում է. «Եւ սկսաք շինել զտունս եւ զեկեղեցիս բարձրագոյն եւ պայծառ քան զառաջինն: Եղաք նոր քաղաք եւ կոչեցաւ անուն Նոր Ջուղայ: Եւ աստ գրեցաւ արեգակնափայլ Աւետարանս ոսկիապատ եւ երանգ երանգ լաջուարդանկար եւ գոյնազարդ...»: Ինչպես տեսնում ենք, շնորհալի գրիչն ու արվեստագետը արդեն հիշատակարանում արժեւորում է մատյանի պատկերազարդումը: Եւ իրոք, Հակոբ Ջուղայեցին ստեղծել է բացառիկ հարուստ պատկերազարդում ունեցող մի մատյան, որը զգալիորեն տարբերվում է իր իսկ ստեղծած նախորդ մատյաններից (Ջուղայեցուց մեր օրերն է հասել 8 մատյան): Ձեռագրի սկզբում զետեղված է տերունական եւ վախճանաբանական թեմաներով 59 մանրանկար, պատկերելով թեմաներ, որոնք այլ ձեռագրերում հազվադեպ են հանդիպում: Նկարներում արտակարգ հարուստ է զարդանկարչությունը, որը կարելի է մասամբ վերագրել նաեւ միջավայրի ազդեցությանը:

Հայ միջնադարյան արվեստի մասնագետ Լ. Դուրնովոն այս մատյանի մանրանկարչության մասին գրում է, որ այն «զարմանք է պատճառում իր բացառիկ ռիթմով, ներդաշնակությամբ ու հոյակերտությամբ՝ ինչպես գունային հարստության մեջ, այնպես էլ յուրաքանչյուր տեսարանի ընդհանուր հորինվածքում. զարմանք են պատճառում մի քանի նոր դեկորատիվ մանրամասներ, ինչպես օրինակ, ոճավորված ամպերի ձեւով նկարի ֆոնի կամ առանձին մասի վրա նշանակված գունային բծերը, որոնք իրենց երանգով եւ ձեւով ընդգծում են պատկերվող իրադարձության տրամադրությունը» (Հայկական մանրանկարչություն, ալբոմ, Եր. 1967, էջ 212):

Ավետարանի մանրանկարների հարուստ պատկերագրությանը հանգամանորեն անդրադարձել է արվեստաբան Ի. Դրամբյանը (Բանբեր Մատենադարանի, 1971, թիվ 10):

Ձեռագրում խորաններից ու ավետարանիչների պատկերներից, անվանաթերթերից ու լուսանցազարդերից բացի յուրօրինակ հարդարանք է օգտագործվել նաեւ բնագրի բոլոր էջերի համար, ուր տեքստը ներառված է գմբեթապատկերով պսակվող գունավառ զարդաշրջանակի մեջ:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Նոր Ջուղայի բարեգործ մեծատուն խոջա Ավետիքի պատվերով շնորհալի Հակոբ Ջուղայեցին ստեղծել է ձեռագրական արվեստի իրոք փայլուն մի ստեղծագործություն, որն ըստ արժանվույն է կրում Նոր Ջուղայի Ավետարան անունը:

Անի Մաթեւոսյան

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅ Մ. Մ. ԱՐԱՐԱՏ ՄԻՈՒԹԻՒՆԸ

1948 - 1949 թւականներին մի շարք մարզիկներ եւ մարզասէրներ համախմբւելով, հիմնում են Հայ Մարզական Ակումբը, ժամանակի Համայնական Խորհուրդը, մի տարածք է տրամադրում, որտեղ աշխաանքները տարւում է մինչեւ 1968 թ.-ը, այնուհետեւ Նոր Ջուղայի Երիտասարդական Կնտրոնատեղի անւամբ, մարզական աշխատանքները շարունակւում է Ն. Ջ. Կուսանաց Վանքի կից տարածքում մինչեւ 1977 թ.-ը ապա փոխադրւում է Հայոց Ազգային Մանկապարտէզի նորակառոյց շէնքը եւ այս անգամ Ն. Ջ. Հայ Մ. Մ. Արարատ Միութեան անւամբ գործունէութիւնը շարունակւում է մինչեւ այսօր:

Այսօր Ն. Ջ. Հայ Մ. Մ. Արարատ Միութիւնը համայնքի կարեւոր կենտրոններից հանդիսանալով իր շուրջ է համախմբել համայնքի մեծամասութեանը: Տարիների ընթացքում իր գործունէութիւնը համընթաց համայնքի օրւայ պահանջներին ծաւալւել է, այժմ ունի հիմնական հինգ բաժիններ՝ Մարզական, Մշակութային, Սկաուտական, Ուսանողական, Երէցների, համապատասխան ենթաբաժիններով:

Միութեան հիմնադրման օրից կարեւոր ներդրում է ունեցել համայնքի երիտասարդութեան կեանքում, ունեցել է տարբեր մարզախմբեր, որոնք մասնակցել են նաեւ Սպահան նահանգի միջակումբային, երկրի մակարդակի, Հ. Մ. Ա. Կ. -ի կազմակերպած համահայկական եւ Հայաստանի համահայկական մրցութիւններին:

Միութեան նախաձեռնութեամբ մինչ այժմ 16 տարի անընդմէջ կազմակերպել է Իրանահայ Գարնանային Մրցութիւններ, մասնակցութեամբ իրանահայ միութիւնների, իսկ վերջին տարիներին Արցախի եւ Ջաւախքի պատւիրարկութիւնները եւս մասնակցել են:

Միութիւնը իր պատմութեան ընթացքում ունեցել է ակնառու մարզիկներ, որոնք մաս են կազմել նահանգի եւ երկրի հաւաքականներին, այսօր եւս Միութեան մարզական խմբերը եւ մարզիկները իրենց կարեւոր ներդրումն ունեն երկրի մարզական կեանքում:

Միութիւնը համայնքում մշակութային կարեւոր կենտրոն է հանդիսանում, մշակութային միջոցառումներ է կազմակերպում իր խմբերի միջոցով, որոնք են՝ Լ. Շանթ թատէրախումբ, Կոմունկ գրական ասմունքի պարախմբեր, Էրեբունի մանկապատանեկան պարախումբ, երաժշտական եւ նկարչական խմբեր:

Մշակութային բաժնի հայեցողութեան ներքոյ է աշխատում նաեւ Մ. Նալբանդեան գրադարանը, որից օգտւում են համայնքի անդամները:

Մշակութային բաժնիը նաեւ հիւրընկալում է նաեւ Հայաստանից եւ այլ շրջաններից ժամանած մշակութային խմբեր:

Մշակութային բաժինը երեք տարի է, որ հոկտեմբեր ամսում կազմակերպում է Մշակութային Փառատօն, որ մեծ ընդառաջում է գտնում:

Սկաուտական բաժինը իր 26 ամեայ անցեալով առանձին կազմակերպչական կառոյցով իր աշխատանքներով, հրապարակային ձեռնարկներով եւ բանակումներով իւրայատուկ դերակատարութիւն ունի համայնքի մատաղ սերնդի հայեցի եւ միութենական դաստիարակչական աշխատանքում:

Միութեան Երէցների միաւորին անդամակցում են համեմատաբար երէց ընկերները, որոնք իրենց միութենական փորձառութիւնը տրամադրում են միութեան երիտասարդ ընկերուհիներին: Երէցների միաւորը կազմակերպում է տարբեր միջոցառումներ, դասարաններ եւ եկամտաբեր աշխատանքներով կարեւոր ներդրում է ունենում միութեան եկամտի հայթաթման գործում:

Ուսանողական միաւորին անդամակցում են տարբեր համալսարաններ յաճախող հայ ուսանողէ ուհիներ, որոնք բաժանւած են տարբեր խմբերի: Միաւորը ձգտում է համախմբել համայնքի ուսանողութեանը օգտւելու նրանց կարողութիւններից, կազմակերպում է դասախօսութիւններ, մրցութիւններ, հանդիպումներ աշակերտութեան համար:

Այսպիսով Ն. Ջ. Հայ Մ. Մ. Արարատ Միութիւնը համայնքի անդամներին համախմբման եւ հայապահպանման կարեւոր ազդակներից է համարւում:

«ՈՍԿԵ ԾԻՐԱՆԻՑ» մինչեւ...

Ամիսը չի լրացել, ինչ ավարտվեց սակավածիրան այս տարում «Ոսկե ծիրան» անունով կոչված առաջին համահայկական կինոփառատոնը (այս մասին վերլուծական նյութ կլինի մեր հանդեսի հաջորդ համարում), երբ ահա օգոստոսի 14-ին մեկնարկելու է մեկ այլ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ: Այս անգամ «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական առաջին մշակութային փառատոնը: Մեզանում արդեն ավանդույթ է դարձել նման լուրջ ձեռնարկների հաղթող կազմակերպումը, որն իր հետ բերում է անխուսափելի թերություններ եւ որոնց մասին հետո ներողամտորեն ասում ենք՝ «ոչինչ, կարեւորն այն է, որ կազմակերպվեց ...»:

Տա Աստված, որ այս մեկը լավ լինի ու փիչ թերություն ունենա: Փառատոնի մասին կարելի է տեսնել համաղասասխան կայքում www.mcya.am

Ստորեւ ներկայացնում ենք ՀՀ մշակույթի նախարար ՀՈՎԻԿ ՀՈՎԵՅԱՆԻ խոսքն ուղղված փառատոնի մասնակիցներին:

«Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնի առաջին ձգվում է Մասյաց աջ ու ահյակ կողմերից, հասնում մինչեւ Եփրատի ու Տիգրիսի ափամերձ տարածքներն ու օվկիանը կտրելով, Մայր Հայրենիք բերում տարագիր կռունկի արծաթե թեւաբախումը:

Փառատոնը մի գեղեցիկ կամարի տակ է հավաքում հայ խմբերգն ու ասմունքը, հայ քաղաքն ու գյուղը, հայ երգն ու պասկերահանդեսը, որ ձեռակերտվում են աշխարհի տարբեր երկրներում, բայց հավերժորեն մնում մաշտոցաշունչ ու հայկաբարբառ:

Երեւանն ու Հայրենիքը բացել են իրենց սրտի ու կարոտի դռները աշխարհի բոլոր հայերի, մշակույթի բոլոր նվիրյալների առջեւ:

Բարի գալուստ...

ԱՅՖԵՐՈՎ...

Միհրեն Շահբազյան, Սբ. Թադեի Վանք, 1968:



Երվանդ Նահապետյան, Տեսարան Իսֆահանից, 1994:

Գեղարդ Ստեփանյան, Հարսանեկան դար Փերիա գյուղում, 1981:

Միջին բրոնզի դարի զարդարվեստի նորահայտ նմուշներ Ներքին Նավեր դամբարանադաշտից

Տիգրան Սիմոնյան

Շուրջ մեկ եւ կես հարյուրամյակ շարունակվող հնագիտական պեղումների եւ դաշտային հետազոտությունների շնորհիվ հայտնաբերվել եւ Հայաստանի Հանրապետության ու հարակից երկրների թանգարաններում կուտակվել են Հին Հայաստանի նստեստության, մշակույթի, գրչության, ճարտարապետության եւ կիրառական արվեստի վերաբերյալ հսկայական քանակի իրեղեն վկայություններ, որոնց մեջ զգալի քանակ են կազմում նաեւ բացառիկ արժեք ունեցող արվեստի գործերը:

Արվեստի մի ինքնուրույն եւ ընդգրկուն բնագավառ է զարդարվեստը, որը կոչված է իրական, սխեմատիկ եւ սիմվոլիկ պատկերներով զարդարել մարդուն եւ նրա շրջակա աշխարհը: Զարդարվեստը սկզբնավորվել է արվեստի ծագմանը զուգընթաց՝ դեռեւս վերին հին քարի դարում, որպես արվեստի առավել տարածված եւ մատչելի ձեւ: Զարդանախշերը ձեւավորվում են ինչպես առանձին տարրերից, այնպես էլ դրանց պարզ ու բարդ համակցումներից եւ միաձուլումից: Յուրաքանչյուր էթնիկ խմբավորում, տոհմ, ցեղ, ժողովուրդ նախընտրել է իր ճաշակին եւ ընկալումներին հարիր զարդաձեւեր, որի հետեւանքով ձեւավորվում են հնագիտական մշակույթներին եւ էթնիկ խմբավորումներին յուրահատուկ զարդանախշերի համակարգեր: Զարդարելով եւ դրանով իսկ կազմակերպելով առարկայի տեսանելի մակերեսները՝ զարդապատկերը բացահայտում, շեշտում եւ ընդգծում է առարկայի արխիտեկտոնիկան:

Զարդապատկերների տարրերի եւ մոտիվների համադրությունները կազմում են կոմպոզիցիաներ, որոնք ունեն որոշակի իմաստային ծանրաբեռնվածություն: Զարդապատկերներով ծածկված բրոնզի դարի իրերի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում թրծակավը, մասնավորապես թրծակավե անոթները, որոնք որպես հնագիտական ամենամասսայական նյութ կանխորոշել են դրանց զարդարման տեխնիկական հնարքների եւ տարրերի բազմազանությունը եւ կոնկրետ մշակույթներին եւ ժամանակաշրջաններին բնորոշ առանձնահատկությունները:

Այս տեսանկյունից կարեւորվում են Աշտարակ քաղաքից մոտ 4 կմ արեւմուտք գտնվող Ներքին Նավեր դամբարանադաշտի համար 1 դամբանաբլրի 2002 թ. պեղումներից հայտնաբերված զարդանախշ խեցանոթները: Թյուբիգենի համալսա-









րանում կատարված ռադիոածխածնային անալիզի տվյալների համաձայն դամբարանը թվագրվում է Ք.ա. 22-րդ դ., այսինքն վերագրվում է միջին բրոնզի դարի վաղ փուլին: Այս ժամանակաշրջանի զարդարվեստի մասին մեր պատկերացումները խիստ սահմանափակ են՝ հնագիտական սկզբնաղբյուրների սակավության պատճառով: Հասարակության ամենավերին աստիճանին կանգնած 50-55 տարեկան տղամարդու թաղումն ուղեկցվել էր «արքայական» ծեսին բնորոշ ճոխությամբ: Ի թիվս հնագիտական այլ գտածոների, դամբարանում հայտնաբերվեցին նաեւ 7 կավանոթներ, որոնցից հինգը մինչեւ 50-70 սմ բարձրության սեւ փայլեցված բարձրակարասներ են:

Կավանոթները թեեւ ծեփված են ձեռքով, սակայն ունեն համաչափ եւ նրբագեղ ուրվագծեր, ձգված, վերին մասում փխված իրան, հիանալի հղկած եւ փայլեցված մակերեսներ: Սակայն ամենից ուշագրավը կավանոթների ուսերը զարդարող ծոփորներն են, որոնք բաղկացած են փորագծման եւ կեսազարդման տեխնիկայով կատարված երկրաչափական զարդանախշերից՝ միմյանց մեջ նեղծված հավասարասրուն եռանկյունիներ, հորիզոնական գոտիներ, որոնց ներքին տարածքը լցված է շեղ գծիկներով եւ եղեւնազարդով: Դրանք խիստ բազմաբնույթ են, սակայն հագեցված են ներքին ռիթմիկայով եւ ունեն հավասարակշռված ու տպավորիչ կառուցվածք: Ընդհանուր առմամբ զարդանախշի տարրերը եւ կատարման տեխնիկան խիստ բնորոշ են միջին բրոնզի դարին եւ զուգահեռներն ունեն Թոքեղի եւ Ալազանիի հովտի «արքայական» դամբանաբլուրներից հայտնաբերված գեղարվեստական իրերի զարդարվեստում: Կան նաեւ առանձին տարրեր, որոնք առաջին անգամ են հավաստվում: Դրանցից նշենք «թիթեռնիկ» կամ «կրկնակի սակր» կոչվող զարդատարրը, որը մինչ այդ մեզ հայտնի էր միայն Ք. ա. 2-րդ հազարամյակի առաջին կեսով թվագրվող կարմիրբերդյան մշակույթում: Սա փաստորեն «թիթեռնիկ» տարրի վաղագույն վկայությունն է, ինչն իր հերթին հավաստում է միջին բրոնզի դարի մշակույթների միջեւ եղած ժամանակագրական եւ տարածական օրգանական կապի մասին: Խիստ ինքնատիպ եւ եզակի է «դրոշակ» տարրը, բաղկացած երկու համակցված ուղղանկյուն եռանկյունիներից, որոնք ունեն երկիարկ եւ եռահարկ դասավորվածություն եւ ծածանվող դրոշներ են հիշեցնում: Բացառիկ ուշագրավ է նաեւ կենաց ծառի եւ երկփող գավաթների պատկերումը: Երկփող կավե գավաթները բրոնզի դարի ծիսական արարողակարգի անքաժանելի սպասից էին, որոնք ամենայն հավանականությամբ օգտագործվում էին հողի սրբազան բեղմնավորման ծեսի ժամանակ: Թրծակավե երկփող գավաթներ մեզ հայտնի են Վերին Նավերի, Լճաշենի, Լոռի բերդի, Մեծամորի եւ այլ հուշարձանների պեղումներից, որոնց վաղագույն օրինակները թվագրվում են Ք.ա. 16-15-րդ. դդ.: Շումերական հարթանդակներում երկփող գավաթները սովորաբար պատկերված են կենաց ծառերի հարեւանությամբ: Երկփող գավաթ է պատկերված նաեւ Քարաշամբի արծաթե գավաթի վրա: Այսպիսով Ներքին Նավերի կարասի վրա պատկերված երկփող գավաթը հողի սրբազան բեղմնավորման ծեսի վաղագույն վկայություններից է:

Նորահայտ կավանոթների զարդերը առանձնապես տպավորիչ են վերեւից դիտելիս, եւ իրենցից գեղագիտական բարձրարժեք վարդյակներ են ներկայացնում: Դրանք ունեն պատշամունքային եւ ծիսահմայական իմաստ, որոնց մեկնությունը կարեւոր նշանակություն ունի հայ հին արվեստի պակնքները բացահայտելու համար: Այս ժամանակաշրջանում ձեւավորված գեղագիտական ընկալումները եւ զարդարվեստի առանձին տարրերը գոյատեւում են հազարամյակներ եւ իրենց վերարտադրությունը գտնում միջնադարյան Հայաստանի քանդակագործության մեջ, սակայն առավել ցայտուն եւ առարկայական են բրոնզի դարի խեցեղենի եւ հայկական գորգերի զարդերի միջեւ եղած կապերը, որոնք մատնանշում են հայկական զարդարվեստի ավանդական ուղղվածությունը եւ զարգացման անընդհատությունը:

Հուլիսի 3-ին Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը տեղի ունեցավ Դանիել Երաժիշտի «Հայաստանը երգերում» ժողովածուի 2-րդ հատորի շնորհանդեսը: Գիրքը նվիրված է ՀՀ ԱԺ փոխնախագահ Յուրի Բախչյանի եւ Մեսրոպ արք. Աբգյանի հիշատակին: Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ հատորը հրատարակվել է Անահիտ Բախչյանի հովանավորությամբ, որն էլ հուզիչ խոսքով բացեց երեկոն:

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐԳԵՐՈՒՄ»

Հատորը բաղկացած է Դանիել Երաժիշտի մշակած շարականներից, տաղերից, ժողովրդական, գուսանական եւ այլ երգերից: Շնորհանդեսին «Շարական» համույթը եւ Յու. Բախչյանի անվ. մանկական ֆիլհարմոնիայի նվագախումբը կատարեցին ժողովածուի երգերից մի փունջ: Խոսք ասաց նաեւ ԳԱՆԻԵԼ ԵՐԱԺԻՇՏԸ, այն ներկայացնում ենք ստորեւ:

Ասեն Հայնեն ասել է. «Աշխարհը ջարդվել է եւ բաժանվել երկու մասի, եւ ճեղքն անցնում է բանաստեղծի սրտի միջով»: Արեւելյան եւ Արեւմտյան Հայաստանները նույնպես անջրպետված են, եւ ճեղքն անցնում է փշալարերով շրջապատված Մայր Արաքսի ափերով, անցնում է նաեւ յուրաքանչյուր ազնիվ հայրենասերի սրտով, որպիսիք էին Յուրի Բախչյանը եւ Մեսրոպ սրբազանը: Հայ ժողովրդի այս երկու սիրասուն զավակների իղձը, գաղափարաբանությունը նույնն էին՝ «համատեղվել Արարատի շուրջը»: Իր առաքելությամբ Յուրին ամրացնում էր Հայաստանի «մարմինը»՝ պետականությունը, իսկ սրբազանը՝ հոգին: Հայոց աշխարհն այժմ հնարավորինս միավորված է մշակույթով եւ դրա դրսեւորումներից մեկն էլ «Հայաստանը երգերում» ժողովածուն է՝ միացյալ հայրենիքի խորհրդանիշը, յուրատեսակ քարտեզը՝ երգերի տեսքով: Իրոք, երգարանում կողք կողքի զետեղված են թե՛ Արեւելյան, թե՛ Արեւմտյան Հայաստանի տարածքում ծնված երգերը՝ Վան-Վասպուրականի, Սասնո, Ակնա, Բութանիայի, Շիրակի ու Արարատյան դաշտի եւ այլ վայրերի, նաեւ Նարեկացու, Սայաթ Նովայի, գուսան Աշոտի եւ այլոց տաղերը... Եղեռնից մազապուրծ մամիկները օջախները թողած, բանալիները փեշերի տակ թաքցրած փախչում էին այն հույսով, որ երբեւէ կվերադառնան: Մեր երգերը նման են այդ բանալիներին, որոնք մի օր կգտնեն ու կբացեն «Դռներն հուսո»: Պատահական չէ, որ երգարանի բնաբանն է 15-16-րդ դդ. իմաստասեր Առաքել Սյունեցու խոսքն ուղղված Գրիգոր Նարեկացուն.

Զարին յաղթեմք քոյին երգով,
Եւ զնա ուժգին խոցոտելով,
Զքսպիս մեղաց մեզ մաքրելով,
Քաղցրանուագ այսու դեղով...

Հիրավի մեծ ուժ է երգը, «հոգեւոր սուր է» Աստծո խոսքը, որ բաբախում է սաղմոսներում, շարականներում, տաղերում...

Հիշում եմ, ղարաբաղյան պատերազմի օրերն էին, կեսգիշերն անց զանգահարեց անծանոթ մի տղամարդ ճակատային գծից: Խնդրեց, որ «Թող հնչեն շեփորք» երգի խոսքերն արագ թելադրեմ: Ռադիոյով երգը լսել էին ու չէին հասցրել բառերը գրել...

Այն ժամանակ հիշյալ երգը եւ բազում այլ նմուշներ ձեռագիր վիճակում էին, իսկ այսօր շնորհիվ Անահիտ Բախչյանի տպագրվել են այսօրվա ու գալիքի համար, վառ պահելով Յուրիի ու սրբազանի հիշատակը:

Յուրան ասում էր. «Ընդհատումը միշտ չէ, որ նշանակում է վերջ»: Այս խոսքերը խորը արմատներ ունեն: Հորացիոսն ասում էր. «Non omnis moriar», որ կնշանակի «ես իսպառ չեմ մեռնի», այլ կշարունակեմ ապրել իմ գործերում, սերունդների հիշողության մեջ: Պուշկինն էլ այս միտքն արծարծեց գրելով. «Հոգիս կշարունակի ապրել քնարիս մեջ»:

«Հայաստանը երգերում» ժողովածուի առաջին հատորի նախաբանում (որ վերատպվել է նաեւ այս հատորում) Մեսրոպ սրբազանը գրել է. «Ես մաղթում եմ, որ իր (Յուրիի) նոր կյանքի ուղեկիցները լինենք մենք՝ ապրողներս, ու մեզանով ինքը եւս ապրի, եւ մենք ապրենք իր տեսիլքներով, իր երազներով, իր երգով: Եւ իր երգը այս երգարանն է»:

Ավելի լավ, քան սրբազանն է ասել, չեմ կարող:

Ինձ մնում է բառափոխելով հայտնի խոսքը, ավելացնել, որ Յուրին, ինչպես եւ ինքը՝ սրբազանը, վերքով գնաց, երգով մնաց...

Ժամանակակից խաչքարեր


Վերնիսաժ

Խաչքարային արվեստի պատմության հարցերը քննելիս սովորաբար ժամանակագրական առումով սահմանափակվում են 17-րդ դարի խաչքարերով: Բայց չէ՞ որ խաչքարերի պատմությունը շարունակվում է, մինչ օրս էլ դրանք ստեղծվում են Հայաստանի տարբեր անկյուններում:

Ժամանակակից խաչքարերն, անշուշտ, ունեն իրենց առանձնահատկությունները: Խաչքարերի դասական գործառույթներին անգամ ավելացել է նորը՝ հուշանվերայինը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ խաչքարերը եզակի են համաշխարհային արվեստում, ուստի լավագույն ձեւով կարող են ներկայացնել (խորհրդանշել) հայկական մշակույթը: Բազմազան է խաչքար-հուշանվերների նյութի ընտրությունը. բացի փայտ (ավելի հեշտ մշակվող եւ թեթեւ նյութ), գիպս, երբեմն նույնիսկ պլաստմասսա: Այդ նոթատակով ստեղծվող խաչքարերն ունեն նաեւ փոքր չափեր, քանի որ պետք է լինեն հեշտ տեղափոխելի: Նշենք նաեւ, որ այդպիսի աշխատանքները հաճախ մասսայական եւ շատամյային բնույթ են կրում:

Մեր ժամանակներում պահպանվել են նաեւ խաչքարերի ավանդական գործառույթները: Նշենք դրանցից նախ հուշակոթողայինը: Այսպիսի խաչքարերն առաջներում դրվում էին հաղթանակների կապակցությամբ, նոր գյուղ հիմնելու, եկեղեցու կամ կամրջի շինարարության ավարտի առթիվ: Նմանօրինակ առիթներով խաչքարեր կանգնեցվում են նաեւ այսօր:

Սակայն ներկայումս առավել տարածված է խաչքարերի մեկ այլ դասական գործառույթը՝ շիրիմարայինը: Բազում այսպիսի խաչքարեր (գեղարվեստական բարձր ճաշակով կերտված կամ անհեթեթ, նուրբ եւ աշխատասեր հյուսվածքով պատված կամ պարզունակ) կարելի է տեսնել մեր գերեզմանոցներում: Անհատական տապանաքարերի հետ մեկտեղ կանգնեցվում են նաեւ խմբակային հուշաքարեր, ինչպես օրինակ, ղարաբաղյան պատերազմին կամ երկրաշարժի զոհերին նվիրված հուշաքարերը:

Էջմիածին

Ժամանակակից խաչքարերի մեկ այլ առանձնահատկությունն այն է, որ եթե առաջներում խաչքարերը հաճախ շինությունների՝ եկեղեցիների, զանգակատների մասն էին կազմում (հայտնի են դեմքեր, երբ պատերի մեջ ագուցվում էին արդեն պատրաստի, հին խաչքարեր), արդա ժամանակակից խաչքարերը հիմնականում առանձին կոթողներ են:

Մեր օրերում խաչքարեր կերտվում են ոչ միայն պատվերի շնորհիվ, այլեւ որեւէ արվեստագետի ստեղծագործական նախաձեռնությամբ, որպես ինքնուրույն ստեղծագործական աշխատանք:

Ոճական տեսակետից կարելի է առանձնացնել ժամանակակից խաչքարերի երեք ձեւ.

1. Դասական ոճով պատրաստված խաչքարեր:

Դրանք կարող են լինել թե՛ հին խաչքարերի պատճենում, եւ՛ ինքնուրույն հեղինակային աշխատանքներ:

2. Վարիացիա: Դասական մոտիվների միավորումն այլ տարրերի հետ (օրինակ՝ զանգ, ժամացույց եւ այլն), ինչն առավել հաճախ հանդիպում է «հուշանվերային» խաչքարերում:

3. Ժամանակակից ոճով ֆանդակված ստեղծագործական խաչքարեր: Վերջիններս, իրոք, խաչքարեր են, քանի որ քարի վրա խաչ է պատկերված, բայց որովհետեւ խաչքարերի ավանդական հորինվածքը չի պահպանված, դասական խաչքարերի հետ դրանց կապում է, թերեւս, միայն անունը: Այդպիսին կարելի է համարել, օրինակ, Սբ. Էջմիածնի բակում Եղեռնի զոհերի հիշատակին կանգնեցված կոթողը:

Ուշարակ

Ամփոփելով նշենք, որ այսօր ստեղծվող խաչքարերը բազաթիվ են եւ բազմազան, դրանք, անկասկած, երբեւէ կդառնան առանձին հետազոտության առարկա:

Նինա Ստեփանյան

Սարգիս Խաչատրյան

ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

Հանրահայտ նկարիչ Սարգիս Խաչատրյանին (1886-1947) իրավամբ կարելի է համարել Նոր Ջուղայի մշակույթի երախտավոր: Նախնական կրթությունը Էրզրումի Սանասարյան վարժարանում ստացած, 1908-11 թթ. Հռոմի գեղարվեստի ակադեմիան եւ 1912-14 թթ. Փարիզի զարդարվեստի դպրոցն ավարտած, Կովկասում հարյուրավոր նկարներ ստեղծած, առա Կահիրեում եւ Վիեննայում (1922), Լոնդոնում եւ Փարիզում (1925) ցուցահանդեսներ ունեցած, Թիֆլիսի Հայ նկարիչների միության եւ Փարիզի «Անի» միության հիմնադիրներից մեկը եղած հայտնի ավետաբեր էր Սարգիս Խաչատրյանը, երբ 1929 թ. մեկնեց Պարսկաստան: Այնուհետեւ նրա կյանքն ու գործը տեւական ժամանակ կապվեց Իրանի ու իրանահայության հետ: Չնայած եվրոպական կրթությանը՝ Խաչատրյանն Իրանում հայտնաբերեց իր համար առավել հոգեհարազատ մի ավետս՝ Արեւելի ավետսը: Նոպատակադրվելով հետազոտել ու ընդօրինակել սեֆյան շրջանի պարսկական որմնանկարները՝ նա ընտրեց Ալի Ղափուն (17-րդ դ. առաջին տասնամյակ), Չեհել Սոթունը (1647), Թալարե Աշրաֆ պալատը (1613-27) եւ մի շարք այլ կառույցներ: Շահական կառույցների նախկին փառից միայն բեկորներ էին մնացել, սակայն հայ ավետսագետը խնամով ընդօրինակեց դրանք եւ հետագայում կազմակերպած ցուցահանդեսների միջոցով դարձրեց համաշխարհային ավետասեր հանրության սեփականությունը:

Պարսկական որմնանկարների հետ տարվող աշխատանքին զուգահեռ նկարիչն ընդօրինակեց Նոր Ջուղայի խոջա Ավետիքի եւ խոջա Պետրոսի աղարակների որմնանկարները:

1931 թ. Թեհրանում բացվեց Խաչատրյանի պարսկական որմնանկարների ընդօրինակությունների ցուցահանդեսը, որը կրկնվեց 1933-ին, նկարչին բերելով պետական «Կրթական առաջին կարգի շքանշան»:

Հետագայում Ս. Խաչատրյանը մեկնեց Հնդկաստան եւ ընդօրինակեց Աջանտայի ու Սիկիրայի դժվարամատչելի անձավային տաճարների որմնանկարները:

Խաչատրյանական ընդօրինակությունների ցուցահանդեսներ կազմակերպվեցին Ամերիկայի Միացյալ Նահանգներում (1942), Փարիզում (1947), Երեւանում (1971):

1930-ին Սարգիս Խաչատրյանը նկարչական ստուդիա բացեց Նոր Ջուղայում, ուր կրթություն ստացան Իրանում հետագայում ճանաչում գտած նկարիչներ Սմբատ Կյուրեղյանը, Երվանդ Նահապետյանը եւ ուրիշներ: Ավետսագետի ներկայությունն ու խորհուրդները պատճառ են դառնում, որ Նոր Ջուղայի հայոց համայնական խորհուրդը Ամենափրկիչ վանքի մատենադարանը վերածի թանգարանի: 1930-33 թթ. հավաքվում են վանքում եւ քաղաքի մյուս եկեղեցիներում եղած արժեքավոր նկարները, եկեղեցական իրեր ու զգեստներ, թանգարանային հետաքրքրություն ներկայացնող այլ նյութեր, որով դրվում է թանգարանի հավաքածուի հիմքը: Սարգիս Խաչատրյանը թանգարանին նվիրեց իր մի քանի ընդօրինակությունները, Ռեմբրանդին վերագրվող մի օֆորտ, ինչպես եւ իր ձեռքի տակ եղած մի քանի որմնանկարչական բնօրինակ հատվածներ: Ամենափրկիչ վանքի համար պատկերեց խոջա Ավետիքի ու խոջա Պետրոսի դիմանկարները:

Սարգիս Խաչատրյանն արգասաբեր տարիներ անցկացրեց Իրանում ու իր ավանդը բերեց թե՛ իրանական, թե՛ հայ մշակույթին: Նամակներից մեկում նա գրում է. «Բոլոր դժվարություններ հանձն եմ առած պարզապես Սաֆավյան դարաշրջանի ամբողջ գեղարվեստը փրկելու համար, որպեսզի միջազգային գեղարվեստը չզրկվի այդ փառքից: Բազմաթիվ եվրոպացի նկարիչներ եկեր ու գացեր են առանց երբեք ուշ դարձնելու այդ որմնանկարներին, որոնք պահում են հավիտենականության բույրը: Գուցե չեն զգացել եւ կամ իրենց հոգիին հետ չեն խոսած, եւ բախտը ինձ վերապահեց գեղարվեստի այդ երեսը կարդալու պատիվը» («Ալիք», 1933, մարտ 25, Խաչատրյանի պարսկական որմնանկարների մասին հանգամանորեն տե՛ս Ա. Ստեփանյան, Սարգիս Խաչատրյանի պարսկական որմնանկարների ընդօրինակությունները, «Մեծավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ» ժողովածու 9, Իրան, Երեւան, 1982, էջ 258-270):

Սարգիս Խաչատրյանի անունը սիրով է հիշվում Նոր Ջուղայում: Ինչպես նկատում է ժամանակակից հետազոտողը. «Այսօր աւելի քան !էս դար անց, դեռեւս զգալի է Խաչատրեանի ներկայութիւնը Սբ. Ամենափրկիչ վանքի թանգարանում» (Անի Բաբայան, Սարգիս Խաչատրեան արուեստագէտ ուսուցիչը, «Հանդէս գրականութեան եւ արուեստի», 2003, թիւ 6, էջ 33):

Ավետսագետի ներկայությունն զգացվում է նաեւ Հայաստանի Ազգային պատկերասրահում, որի հավաքածուի մաս են կազմում նկարչի այրի Վավա Խաչատրյանի 1971-ին թանգարանին նվիրաբերած բազմաթիվ հեղինակային գործերն ու որմնանկարների արժեքավոր ընդօրինակությունները:

Կ. Մ.

Ցուցադրություն Նկարչի տանը

Մայիսի 31-ին Երեւանի Նկարչի տանը կայացավ Գեղարվեստի ակադեմիայի տեխնիկ եւ մոդելավորման բաժինների շրջանավարտների դիպլոմային ատենախոսությունների ցուցադրությունը (պաշտպանությունը): Բացումը կատարեցին «Նանե» հանույթի փոքրիկ «Նանեները»: Մասնակցում էին 27 ուսանողներ, որոնք ներկայացրել էին զանազան ատենախոսություններ: Հանդիսատեսների ուշադրությունը գրավեց հատկապես Գեւորգ Շադոյանի (Հալեթ) «Հայկական հարսանիք» ներկայացումը (ավանդական հարսանիքի բոլոր մասնակիցները՝ համապատասխան հագուստով), որը հին հայկական տարազի արտացոլումն էր ժամանակակից կերպի մեջ: Շնորհալի մոդելավորողը առաջիկայում իր ատենախոսությունը կներկայացնի ԱՄՆ-ում:

«Միս Հայաստան 2003» Լուսինե Թովմասյանը եւ մոդելավորող Գեւորգ Շադոյանը (վարսահարդար՝ Ավո Շադոյան)
Լսկ.՝ Իլյա Մանթաղյան

Նկարչի տանը բացված մեծ ցուցահանդեսից հետո, հունիսի 11-ին, Հայաստանի Ազգային գրադարանում կայացավ ամերիկահայ մեծ նկարիչ Արշիլ Գորկու 100-ամյա հոբելյանին նվիրված «Հավերժի ճամփորդը» խորագրով ցուցահանդեսը: Ներկայացված էին նկարչին վերաբերող ծավալուն գրականություն, մամուլում եղած հրապարակումներ, նամակների պատճեններ, լուսանկարներ: Ցուցադրանյութերը հնարավորություն էին ընձեռում ծանոթանալու նկարչի դժվարին կյանքին, նրա բազմաբովանդակ արվեստին: Ցուցահանդեսի հրավիրատոմսին Արշիլ Գորկու մասին կարծիքներից ու գործերի վերաստղություններից բացի տեղ էր գտել նրա հայտնած հետեւյալ ուշագրավ կարծիքը. «Մարդկային աչքը հետզհետաբար ընկալում է շոշափելին... Մարդկային միտքը լճացում կարդի, եթե չունենա ստեղծագործական երեւակայություն եւ բավարարվի սոսկ ֆիզիկական տեսողությամբ... Վերացական արվեստն օգնում է մարդուն ընկալելու տեսանելիից այն կողմ ընկածը...»:

Ցուցահանդեսին մասնակցում էին մի շարք նկարիչներ, որոնք ներկայացրել էին Գորկուն նվիրված իրենց ստեղծագործությունները:

Լուսինե Մաթեւոսյան

«Ծիլեր - 7» ցուցահանդեսը

Հալեթի Քարեն Եփիսե ազգ. ճեմարանում ավանդաբար կազմակերպվող «Ծիլեր» պատանի եւ երիտասարդ սկսնակ նկարիչների մայիսին բացված ցուցահանդեսը նվիրված էր Սերգեյ Փարաջանովի 80-ամյակին: Մասնակցում էին շուրջ 70 աշակերտներ եւ շրջանավարտներ, որոնք ներկայացրել էին կոլաժային ատենախոսություններ եւ աբստրակտ նկարներ: Ցուցահանդեսի հովանավորն էր Բերիո թեմի առաջնորդ Սուրեն արք. Գաբրոյանը, ղեկավարը՝ Գեւորգ Շադոյանը:

Միջոցառումն արժեքավոր էր ոչ միայն ներկայացված գործերով, այլեւ ճանաչողական նշանակությամբ, քանի որ հալեթահայությանը ծանոթացրեց մեծ կինոռեժիսորի արվեստին:

«ԱԽԹԱՄԱՐ»

ՖԻԼՄԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Հունիսի 27-ին «Մոսկվա» կինոթատրոնում տեղի ունեցավ Հովհաննես Թումանյանի «Ախթամար» լեգենդի հիման վրա պոլսահայ հայտնի կոմպոզիտոր Սիրվարդ Գարամանուկի գրած սիմֆոնիկ պոեմի կինոբեմադրությունը (սցենարի հեղինակ եւ բեմադրիչ՝ Հովհաննես Հովհաննիսյան, արտադրիչ՝ Շահան Արծրունի): «Ախթամար» երաժշտական ֆիլմը, որը ներկայացրել էր Ե. Չարենցի անվ. գրականության եւ արվեստի թանգարանը, նկարահանվել է երկու տարբերակով, որոնցում տարբեր են լեգենդի սիրահար զույգի դերակատարները: Երկրորդ տարբերակը, որը նկարահանված էր ավելի ազատ, ավելի զգացական էր:

Շնորհանդեսից առաջ ելույթ ունեցան երաժշտագետ Արաքսի Սարյանը եւ գրակ. եւ արվ. թանգարանի տնօրեն Հենրիկ Բախչինյանը, որոնք ներկայացրեցին երաժշտական ստեղծագործությունն ու ներկա գտնվող հեղինակին: Ֆիլմի առաջին տարբերակի ցուցադրումից հետո բեմ հրավիրվեցին բեմադրիչն ու արտադրիչը, որոնք ներկայացրեցին ֆիլմի մյուս մասնակիցներին, որից հետո ցուցադրվեց երկրորդ տարբերակը: Ինչպես նշեց Շահան Արծրունին, այս ձեռնարկի իրականացմանն իրեն մղել է «Նյու Յորք թայմսում» տպված մի հոդված, ուր մտահոգություն է հայտնվում առավելաբար միջազգային արվեստով հետաքրքրված երիտասարդությանը դասական երաժշտության հետ ծանոթացնելու դժվարության վերաբերյալ: Երաժշտական ֆիլմի նկարահանումը այս խնդրի լուծման արդյունավետ միջոցներից է, եւ պետք է ասել, որ «Ախթամարի» հեղինակները հասել են իրենց նպատակին: Գրական հանրահայտ հիմքի, բարձրարվեստ երաժշտության ու հնուց կատարման եւ կինոարվեստի հնարքների ներդաշնակ համադրումը ֆիլմը դարձրել են դիտարժան ու հետաքրքրական:

Իրանահայ հրատարակություններ


Harootun Der Hovhanian

HISTORY OF NEW JULFA

Translated from classical Armenian by

Leon Minassian

and

M. A. Mussavi Fereydani



Դարբերականներ



«Հայ Արվեստի» գրադարան

Խմբագրությունը ստացել է ստորև ներկայացվող հրատարակությունները: Խորին շնորհակալություն ենք հայտնում հեղինակներին ու հրատարակիչներին:

1

2

3

4

5

6



7

8



9

10

1. Դոկտոր Նալբանդեան, «Լոյս» Ընդհանուր գիտելիքներ, 4-րդ հատոր, Լոս Անջելես, 2003:

2. Լեւոն Մինասեան, Գիւղական բառ ու բան (Փերիա գաւառ), Նոր Յուրֆա, 1998:

3. Խուան Միրո, Սա իմ երազանքների գույնն է, (գրույցներ Ժորժ Ռայարի հետ), «Սարգիս Հայէնց» հրատ., Երեւան, 2004:

4. Առա Յակոբյան, Ծոխանկարիչ Վարդան Սահուխյան, «Ձանգակ-97» հրատ., Երեւան, 2004:

5. ARMENIA Tourism Catalogue, Edit Print, Yerevan, 2004.

6. Լեւոն Լամբիկյան, Անկույս օրերի ոգեղեն դռոանցներ, Գրականության եւ արվեստի թանգարանի հրատ., Երեւան, 2004:

7. Վարազդատ Յարությունյան, Հայկական խաղահանդեսության եւ ճարտարապետության տեսության ու պատմության հիմնախնդիրներ, Երեւան, 2004:

8. Азат Никогосович Торосян, Монументальные произведения, Скульптура, графика, Витебск, 2001.

9. Vahram, (editor Movses Herguelian), Noah's Ark Art Gallery, Lebanon, 2004.

10. Arto Tchakmakchian, RETROSPECTIVE, Carte Blanche, Montreal, 2003.

Շնորհավորանք

Մայիսի 14 -ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում «Սիրիայի հայկական համայնքը 1946-71 թթ.» թեմայով թեկնածուական դիսերտացիա պաշտպանեց եւ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստացավ Սիրիայում (Հալեպ) «Հայ արվեստի» լիազոր ներկայացուցիչ Անի Ֆիշենկյանը:

Ջերմորեն շնորհավորում ենք մեր գործընկերոջը եւ մաղթում նորանոր հաջողություններ:

«Հայ արվեստի» խմբագրություն

Բաժանորդագրվեք

ՀԱՅ ԱՐՎԵՍՏ

Դիմեք ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ եւ ԱՐՑԱԽՈՒՄ

«ՀԱՅՄԱՄՈՒԼ» գործակալությանը կամ խմբագրություն,

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ՝ հանդեսի լիազոր ներկայացուցիչներին

ԱՄՆ, Նյու Յորք, *Շահան ԱՐԾՐՈՒՆԻ*
solopiano@hotmail.com
Լոս Անջելես, *Տիգրան ՍԱՐԳՍՅԱՆ*
tigrani@hotmail.com
Բոստոն, Արա ՂԱԶԱՐՅԱՆ
acf.hmh@verizon.net

ԱՄԷ, Աբու Դաբի, *Անդրանիկ ԴԱՂԼՅԱՆ*
emcopauh@emirates.net.ae

ԱՎՍՏՐԱԼԻԱ, Մելբուռն, *Բիաստիս ՄԱՆՈՒԿՅԱՆ*
hye@hyeart.org

ԹՈՒՐՔԻԱ, Ստամբուլ, *Մուշեղ ՆԱԶԱՐՅԱՆ*
yt8@duke.edu

ԻՐԱՆ, Թեհրան, *Ալբերտ ՔՈՉԱՐՅԱՆ*
akocharian@hotmail.com
Սպահան, *Անի ԲԱԲԱՅԱՆ*
ani_babayan@yahoo.com

ԼԻԲԱՆԱՆ, Բեյրութ, *Մովսես ՀԵՐԳԵԼՅԱՆ*
noahsark@cyberia.net.lb

ԿԱՆԱԴԱ, Մոնրեալ, *Մարո ՄԱՆԱԿՅԱՆ*
marom@videotron.ca
Տորոնտո, *«Արարատ-կամար» մշակութային միություն*

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ, Լոնդոն, *Արթուր ՕՇԱԿԱՆՑԻ*
art@oshakantsi.com

ՌՈՒՍԱՍՏԱՆ, Սանկտ Պետերբուրգ, *Ատոմ ԽԱՉԱՏՐՅԱՆ*
akhachents@yahoo.com

ՍԻՐԻԱ, Հալեպ, *Անի ՖԻՇԵՆԿՅԱՆ*
fishenkjianani@hotmail.com

ՖՐԱՆՍԻԱ, Փարիզ, *Էդդա ՎԱՐԴԱՆՅԱՆ*
eddavard@yahoo.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ՋՈՒՂԱ - 400. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱՆՔ 3
ՋՈՒՂԱՅԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ 4
Հարցազույց Թաթուլ Օհանյանի հետ 5
Կ. Մաթեւոսյան, Ի խորոց ուրտի 6
Նոր Ջուղայում հայերի հաստատման 400-ամյակի նշման ձեռնարկների ծրագիր-ժամանակացույցը 7
Թաթուլ Օհանյան, Նոր Ջուղայի հիմնադրումը 8
Արմեն Հախնազարյան, Նոր Ջուղայի ճարտարապետությունը 10
Մուրադ Հասրաթյան, Նոր Ջուղայի եկեղեցիները 12
Անի Բաբայան, Նոր Ջուղայի որմնանկարչությունը 16
Ժամանակակից գոգեր 18
Միլանդա դը Մոնթ 22
Վիոլետ Մաթեւոսյան, Նոր Ջուղայի Սբ. Վանքի Ամենափրկչյան թանգարանը 24
Անի Մաթեւոսյան, Նոր Ջուղայի Ավետարանը 27
Նոր Ջուղայի «Արարատ» մարզամշակութային միությունը 28
Տիգրան Սիմոնյան, Միջին բրոնզի դարի զարդարվեստի նորահայտ նմուշներ Ներքին Նավեր դամբարանադաշտից 30
Դանիել Երաժիշտ, «Հայաստանը երգերում» 32
Նինա Ստեփանյան, Ժամանակակից խաչքարեր 33
Երախտավորը. Սարգիս Խաչատրյան 34
Մշակութային լուրեր 35
Իրանահայ հրատարակություններ 36

Հաջորդ համարում

- **«Մեկ ազգ, մեկ մշակույթ»** համահայկական մշակութային փառատոնը (օգոստոս 14-23)
- Որո՞նք են արդի հայ մշակույթի դժվարությունները եւ ինչպես հաղթահարել դրանք
- **Կերպարվեստ.** Այվազովսկու դասերը
- **Սփյուռքահայ արվեստագետներ.** Մանուկ ՂՐԴՅԱՆ ՅՈՒՐՈՉ Գեւորգ ԿԱՍԱԲՅԱՆ Էլիզաբեթ ՌՈՄՀԻԼԴ